Эта история оставила достаточно серьезный след на дальнейших отношениях как Ираклия Аласании, так и его партии с остальными членами коалиции. В 2014 году, после того как в прессе появилась информация о том, что были задержаны высокопоставленные сотрудники Министерства обороны и Вооруженных сил страны, Аласания выступил с заявлением, где поддержал своих подчиненных, требуя завершения следственного процесса и вердикта суда. Однако, позже, когда были выдвинуты обвинения против военных врачей, министр обороны назвал все это политически мотивированным давлением на него и «атакой против евроатлантического выбора Грузии». Реакцией премьер-министра Грузии Ираклия Гарибашвили на заявления члена коалиции и министра его правительства стало то, что он своим решением от 4 ноября 2014 года освободил Ираклия Аласания с должности министра обороны страны. В ответ на это, 5 ноября, парламентская фракция партии «Свободные демократы», будучи одной из 6 партий-основателей коалиции «Грузинская мечта», покинула ряды парламентского большинства.

Решение партии «Свободные демократы» привело к тому, что страна оказалась на грани политического кризиса, с возможностью потери парламентского большинства. Уже по итогам ответных действий руководства Грузии, в парламенте страны про-

изошли перестановки, позволившие правящей коалиции «Грузинская мечта», благодаря активному вмешательству экс-премьера Бидзины Иванишвили, повысить количество своих депутатов от 81 до 87. Все это стало реальностью благодаря тому, что параллельно выходу «Свободных демократов», к парламентскому большинству присоединилась новая фракция - «Независимые мажоритарии - сильные регионы», которая состояла из 6 депутатов. На сегодняшний день, по итогам политического кризиса ноября 2014 года, распределение мест в 150-местном парламенте Грузии следующее: правящая коалиция «Грузинская мечта» насчитывает 87 мандатов; оппозиционное «Единое национальное движение» - 51; новая оппозиционная фракция «Свободные демократы» - 8 мандатов. Остальные четыре депутата присутствуют в качестве независимых депутатов.

Еще одним непростым вопросом внутривнутриполитической повестки Грузии является проблема распределения ролей между президентом и премьер-министром, несмотря на то, что с октября 2013 года вступили в силу конституционные изменения, ограничившие полномочия президента страны в пользу премьер-министра. С конца 2013 года ко всем юридическим коллизиям добавился и личный конфликт между президентом Георгием Маргвелашвили и поддержавшем его ранее экс-премьером Бидзиной Иванишвили. Автоматически негативно стал относиться к президенту и преемник Бидзины Иванишвили на посту премьер-министра Грузии Ираклий Гарибашвили. С тех пор прослеживаются разногласия относительно того, кто должен представлять страну на значимых международных событиях, а также наблюдается минимальный уровень сотрудничества между правительством и аппаратом президента страны.

Конфликт также повлиял и на то, что в феврале 2014 года, во время первого ежегодного выступления президента Георгия Маргвелашвили перед парламентом страны, глава правительства и его министры, проигнорировав приглашение президента, отказались от личного присутствия в парламенте страны. Ситуация повторилась и в нынешнем году, когда 31 марта 2015 года выступление президента также было проигнорировано правительством страны.

На сегодняшний день внутривнутриполитический расклад в Грузии следующий: с одной стороны это все еще действующее парламентское большинство - «Грузинская мечта», которая, несмотря на различные слухи о ее дезинтеграции, вплоть до октября 2016 года все же сохранит свое единство и целостность. Но, тем не менее, все коалиционные партии уже сейчас готовятся к предстоящим выборам. С достаточно низким рейтингом, но стабильно все еще функционирует партия Михаила Саакашвили «Единое национальное движение», которая сумела повлиять на некоторых членов коалиции и добилась на сегодняшний день потери парламентского большинства коалиции в Верховном совете Аджарской автономной республики, что также ударило по рейтингу официального Тбилиси. С другой стороны, пытается усилиться оппозиционная партия «Свободные демократы», которая поддерживает хорошие отношения с действующим президентом страны Георгием Маргвелашвили. Необходимо отметить, что «Свободные демократы» всевозможными способами отказываются от сотрудничества с партией Михаила Саакашвили и идентифицируют себя с конструктивной оппозиционной политической силой, готовясь к предстоящим парламентским выборам 2016 года.

Кроме того, с конца 2014 года из-за ухудшения экономической ситуации в стране, правящая коалиция «Грузинская мечта» получила очередной удар, что также повлияло на падение уровня рейтинга доверия. Обесценивание национальной валюты на 30-35%, спад экспорта из Грузии в Россию и Украину, а также сокращение поступления денежных переводов извне - все это поставило экономический блок правительства, да и саму правящую коалицию под удар критики оппонентов и увеличило уровень недовольства народом правительства страны. Все эти вызовы, а также предстоящие в 2016 году парламентские выборы, поставили перед премьер-министром Грузии задачу обновления состава коалиции, с параллельным усилением ее ядра - партии «Грузинская мечта - Демократическая Грузия». Однако данная задача нелегка, так как последние два года также выявили проблему недостатка кадров у партии «Грузинская мечта - Демократическая Грузия», которая в случае преждевременного распада коалиции и выхода из нее только лишь «Республиканской партии» может

нанести вред внутривластической стабильности и лишит правящую коалицию и премьер-министра многих рычагов управления страной.

Позже, уже к концу лета 2015 года, правящая партия «Грузинская мечта - Демократическая Грузия» дала старт предвыборной кампании в парламент страны 2016 года. Тогда же предвестником активизации внутривластического процесса стали кадровые перестановки в правительстве страны. Так, на пресс-конференции в Тбилиси, 1 сентября, премьер-министр Грузии Ираклий Гарибашвили заявил о своем решении снять с должности главу МИД *Тамар Беруашвили*³⁶, а на ее место назначил вице-преьера, главу министра экономики и устойчивого развития Грузии Георгия Квирикашвили. Кроме назначения на пост главы МИД, Квирикашвили также сохранил за собой пост вице-преьера страны. Самого Квирикашвили на его посту сменил бывший вице-мэр Тбилиси Дмитрий Кумсишвили.

На фоне продолжающегося обесценивания национальной валюты Грузии и проблем с экспортом из страны, ожидания многих экспертов и части населения заключались в том, что возможные изменения должны были коснуться смены министров экономического блока. Однако премьер-министр Грузии не пошел на столь радикальный, и в то же время, ожидаемый шаг. Таким образом, уже второй раз изменения в правительстве носили косметический характер. Ранее, весной текущего года, на фоне очередного пика обесценивания национальной валюты Грузии, своих постов лишились министры спорта, обороны и охраны окружающей среды.

Комментируя сентябрьские кадровые изменения в правительстве страны, многие эксперты заявили о том, что не ожидают никаких изменений к худшему.

После всего этого, в тех же первых числах сентября, начались интересные процессы в нескольких муниципалитетах Грузии. Показательным стал импичмент главы Сакребуло (гор. совета - ред.) Сенаки, чем, как нам кажется, был дан старт предвыборной

³⁶ Она менила в ноябре 2014 года Майю Панджакидзе из партии “Свободные демократы”;

кампании 2016 года, а также началась кадровая «чистка» в региональных офисах правящей партии. Исполнительный секретарь правящей партии «Грузинская мечта - Демократическая Грузия» Ираклий Кобахидзе отметил грузинским СМИ, что за оставшееся до выборов время подобный процесс ожидается еще в десяти районах республики.

На этом фоне, достаточно интересным является недавнее заявление бывшего депутата и экс-секретаря Совбеза Грузии *Валерия Гелбахиани*, который в интервью грузинским СМИ отметил, что на парламентских выборах 2016 года политическая партия «Грузинская мечта - Демократическая Грузия» примет участие в качестве независимого политического субъекта, вне правящей коалиции «Грузинская мечта». По словам политика, его источники из партии утверждают, что этот вопрос практически решен и сейчас ведется обсуждение касательно того, кто станет первым номером в избирательном списке партии. «На определенных условиях ряд партий, входящих в коалицию («Грузинская мечта» - ред.), могут в дальнейшем присоединиться к партии «Грузинская мечта - Демократическая Грузия», - заявил Гелбахиани и отметил, что главой списка может стать сам экс-премьер Бидзина Иванишвили.

Относительно возвращения Бидзины Иванишвили в активную политику за последние несколько месяцев высказывались многие грузинские политики и эксперты. По словам одного из них, бывшего советника Бидзины Иванишвили по экономическим вопросам *Гиу Хухашвили*, на сегодняшний день ситуация такова, что он (Бидзины Иванишвили) должен вернуться.

Тем не менее, оставляя в стороне слухи и различного рода заявления, можно с уверенностью констатировать, что предвыборной кампании в Грузии был дан старт, а в течение ближайшего года ожидаются достаточно интересные внутривнутриполитические процессы. Усиление партии «Грузинская мечта - Демократическая Грузия», созданной Бидзиной Иванишвили после прихода во власть, будет продолжаться и впредь. Уже сегодня могут вестись переговоры по поводу возможной конфигурации правящей коалиции перед выборами 2016 года и возможной его трансформации после них. Несмотря на серьезнейшие экономические

проблемы в Грузии, слабость политических оппонентов как внутри парламента, так и вне его, дает действующим властям возможность избежать политического кризиса. Однако, в то же время, ситуация может претерпеть изменения и положение правящей элиты может стать более хрупким. Тогда могут уже понадобиться серьезные кадровые изменения в правительстве Грузии, вплоть до смены премьер-министра. Кроме того, правящая партия «Грузинская мечта - Демократическая Грузия», готовится к пессимистичным сценариям, усиливая свои позиции, как в Тбилиси, так и в регионах страны.

Сентябрь 2015 года

**ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԸ ԵՎ
ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱՐԱՏԻՎ**

Լիանա Այվազյան

Այսօր միջազգային հարաբերությունները հասկանալու համար հաղորդակցության դերն անգնահատելի է դարձել: Նոր տեխնոլոգիաները, համացանցը, սոցիալական մեդիայի ներկա միջավայրը և դրանց ազդեցությունը այս հանգամանքը առավել ակնհայտ են դարձրել: Վերջին տարիներին ձևավորվել է ուսումնասիրության մի օրակարգ՝ հիմնված *ռազմավարական նարատիվի* կոնցեպտի վրա, որը թույլ է տալիս ըմբռնել և բացատրել ներկայումս միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները, ավելին՝ ձևավորել և ուղղորդել դրանք, ստեղծել նոր աշխարհակարգ:

Աննախադեպ հետաքրքրություն է առաջացել իմացական տիրույթի հանդեպ ընդհանրապես, իսկ ռազմավարական նարատիվը ևս, այսպես կոչված, *իմացական տիրույթին (cognitive domain)* է նաև վերաբերում: Մասնագետները հետևյալ հարցադրումն են անում. կարո՞ղ են արդյոք մեծ տերությունները առաջադրել գալիք աշխարհակարգի այնպիսի նարատիվ, որը «կգնեն» բոլորը, կարո՞ղ է արդյոք համոզիչ ռազմավարական նարատիվը անհմաստ դարձնել Երրորդ համաշխարհայինը:

Ո՞րն է արտաքին և ներքին զարգացումների ու փոփոխությունների, դրանց առանձնահատկությունների համատեքստը, որ ստիպում է նման եզրահանգման գալ և շեշտադրել նարատիվների դերը:

Մենք նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի ականատեսն ենք: Նախ միջազգային հարաբերություններում տեղի են ունենում *ուժի հաշվեկշռի* փոփոխություններ: Նման անցումային փուլում, երբ հեգեմոն պետություններին մարտահրավեր նետող այլ ուժային կենտրոններ են առաջանում, ինչպես ցույց է տալիս նախորդ երկու աշխարհամարտերի պատմությունը, պատերազմն անխուսափելի է դառնում:

Մյուս փոփոխությունն այն է, որ դիվանագիտությունն ու արտաքին քաղաքականությունն ավելի թափանցիկ, հետևաբար և խոցելի են դարձել: Հասարակությունների դերը մեծացել է, հասարակական կարծիքն ավելի պահանջատեր է: Պատերազմ հայտարարելու վճռորոշ որոշում կայացնելու և այն լեգիտիմացնելու համար վերնախավը պետք է իր և դաշնակից երկրներում ունենա լայն աջակցություն, որի համար անհրաժեշտ է որոշակի ուղղորդելիության ապահովում, ընկալումների կառավարում, ինչն արդեն դժվար ու խնդրահարույց է դարձել: Տեղեկատվական տարածքը աչքի է ընկնում լսարանի և դերակատարների աճով և բազմաձայնությամբ, արագ և անընդհատ փոփոխվող բովանդակությամբ, իսկ սոցիալական մեդիայի պայմաններում, երբ բոլորը բովանդակություն արտադրողներ են և տարածողներ, վերացել են ավանդական պրոֆեսիոնալ և սիրողական մեդիայի սահմանները: Մի խոսքով, *վերահսկողությունը* դառնում է անհնար: Իրավիճակը, իրադարձություններն ու տեղեկատվական հոսքերն անընդհատ փոխվում են: Օրինակ՝ Իսլամական պետությունը 40 լեզուներով է քարոզչություն իրականացնում:

Հաջորդն այն է, որ XXI դարի տեխնոլոգիական զարգացումները փոխել են նաև *Ուժի* էությունը. ուժը և ազդեցությունը դադարում են խիստ փոխկապակցված լինել: Ավելին, ժամանակակից հիբրիդային պատերազմում վիրտուալ տարածքի կառավարման վարպետության շնորհիվ հաճախ կարող է թույլ կողմը հաղթանակել: Այսօր իշխանությունը ապակենտրոնացված է՝ տասնյակ դերակատարներ ի գորու են ազդելու համաշխարհային զարգացումների վրա, ինչպես նկատում է Ռիչարդ Հասար³⁷:

Կա մեկ այլ կարևոր հանգամանք ևս: Մեր ժամանակներում հաղթանակել է անհատը, ինչպես գրում է Ռոբերտ Ֆրենսիս Կուպերը դեռ 2003թ. լույս տեսած իր գրքում: Փառքի արժանանալու համընդհանուր ճիգը, որպես ազգային հիմնական ձգտում, փոխարինվել է սոսկ սպառողի հոգեբանությամբ: Մարդիկ ցանկություն չունեն պատերազմելու: Հետևաբար, եզրա-

³⁷ Хаас, Ричард. “Эпоха бесполярного мира”, Россия в глобальной политике, #4, 2008.

կացնում է նա, *ամեն գնով պատերազմից պետք է խուսափել*: Նույն պատճառով էլ այսօր արտաքին քաղաքականությունը ներքինի շարունակությունն է դարձել³⁸: Մի խոսքով, արտաքին միջամտությունների, պատերազմներ վարելու լեգիտիմության և մարդկանց ընկալումները կառավարելու խնդիրը ռազմավարական մտքի ուշադրության կենտրոնում է հայտնվել: Հասկանալու համար ռազմավարական նարատիվի ազդեցության գաղտնիքը, անդրադարձ կատարենք բուն նարատիվին:

Բանն այն է, որ մարդիկ որոշումները կայացնում են ոչ թե ռացիոնալ, *այլ նարատիվային* հիմքի վրա: Նրանք փաստերն ընկալում և մտապահում են *պատմությունների (stories)* ձևով: Նարատիվը իմաստ է հաղորդում իրադարձություններին՝ պարզեցնելով և իրար հետ կապ չունեցող իրադարձությունները, մարդկանց, փաստերը կապելով մի պատումի մեջ:

Նարատիվն առաջինը նկարագրել են հույն փիլիսոփաները: Հռետորության, աստվածաբանության, հաղորդակցության, հոգեբանության, մարդաբանության, գրականության ասպարեզում բազմաթիվ հեղինակներ այս կամ այն կերպ անդրադարձել են դրանց: Սակայն միայն 20-րդ դարում է, որ նարատիվը ուսումնասիրության առարկա է դառնում: Ուոլտեր Ֆիշերը³⁹, մատնացույց անելով փորձի նարատիվացումը որպես մարդու հիմնական իմացական ռազմավարություն և սոցիալական պրակտիկա, նույնիսկ ընդհանրացրեց, թե մենք բոլորս պատմողներ ենք (“We are Homo-narrans”), իսկ Ռոլան Բարթը համոզված էր, որ նարատիվը քառսից տիեզերք է կառուցում, որ այն համընդհանուր, անդրպատմական ու անդրմշակութային բնույթ ունի և մարդկային կյանքի բաղկացուցիչ մասն է:

Նարատիվային տրամաբանությունը աշխատում է երկու ուղղությամբ՝ *իմացական* և *զգացական*: Մենք կարևորում ենք պա-

³⁸ Cooper, Robert. “The Breaking of Nations. Order and Chaos in the Twenty-First Century”, Grove Press, New York, 2003, p.53. “<https://www.princeton.edu/~amoravcs/library/cooper.pdf>”

³⁹ Fisher, Walter R. “Human Communication as Narration: Toward a Philosophy of Reason”, Value, and Action. Columbia: University of South Carolina Press, 1987, pp. 62-63.

տումը ոչ թե լավ կամ ճշմարիտ լինելու, այլ հզոր *ազդեցություն* թողնելու համար: Նարատիվներում չկան անմեղ պատմություններ, դրանք երբեք չեզոք բնույթ չունեն, հաճախ էլ վտանգավոր են: Որոշ դեպքերում խիստ վտանգավոր: Այնպես որ *դրանք միշտ ռազմավարական բնույթ են կրում*:

Ռազմավարական նարատիվը միշտ կապում է անցյալը, ներկան և ապագան, իմաստ հաղորդում դրանց: Այն ոգեշնչում է և հույս հաղորդում մարդկանց: Պատումը ներկայացվում է որոշակի համատեքստում, համոզում է, մեկնաբանում, ստեղծում հասարակական կարծիք, ձևավորում դաշինքներ և ինքնություններ: Ահա թե ինչու *ռազմավարական նարատիվները* հիանալի գործիք են, որոնք նյութական ռեսուրսների հետ միասին կարող են պետությունների համար նոր աշխարհակարգ ձևավորելու կարևոր միջոց դառնալ:

Մի շարք հետազոտողներ, նշելով ռազմավարական նարատիվների ուժը, պնդում են, որ տարբեր դերակատարներ կարող են իրենց արժեքներն ու շահերն առաջ տանելով մեծացնել սեփական ազդեցությունը, փոխել միջազգային հարաբերությունների դիսկուրսիվ միջավայրը, լեգիտիմացնել գործողությունները, կառավարել մյուս դերակատարների ընկալումները, պատկերացումներն ու սպասելիքները ձևավորվող աշխարհակարգից, սոցիալականացնել չենթարկվող, թույլ անդամներին: Լոուրենս Ֆրիդմանը հենց այդպես էլ գրում է, թե ռազմավարական նարատիվները ստեղծվում են հետապնդելով ընթացող իրադարձությունների հանդեպ հիմնական դերակատարների արձագանքը կառուցելու նպատակ⁴⁰:

Ռազմավարական նարատիվն ուղղված է երկու լսարանի՝ *արտաքին և ներքին*: Այն հանդես է գալիս երեք մակարդակներում՝ *միջազգային, ազգային/պետական և որոշակի խնդիրների շուրջ*: Չմոռանանք սակայն, որ մի մակարդակի նարատիվը կարող է ազդել մյուսների վրա՝ փոխելով տարվող քաղաքականությունը:

⁴⁰ Miskimmon, Alister, O'Loughlin, Ben, Roselle, Laura. "Forging the World: Strategic Narratives and International Relations", Centre for European Politics/New Political Communications Unit, 2012, p.6.

Ամփոփենք ռազմավարական նարատիվի գործառույթները: Այն թույլ է տալիս՝

- հասկանալ նոր աշխարհակարգը և թե ինչպես է վերջինս կառուցվում, պահպանվում, ընկալվում տարբեր դերակատարների կողմից,
- կերտել, ձևավորել միջազգային հարաբերությունների համակարգը,
- փոխել դերակատարների վարքագիծը/change behavior,
- ուղղորդել տարբեր խաղացողների սպասելիքները,
- ազդել մյուս դերակատարների արձագանքների ձևավորման վրա,
- հաստատել դերակատարների ինքնությունը,
- լեգիտիմացնել դերակատարների գործողությունները
- ձևավորել դաշինքներ,
- սոցիալականացնել խոցելի դերակատարներին (week/rogue states)՝ ավելի լայն ռազմավարական նարատիվի մեջ ընդգրկելով նրանց,
- ստեղծել հավաքական ինքնություններ և այս կերպ մեկուսացնել միջազգային հարաբերություններում ժխտողական կեցվածք ունեցող խաղացողներին:

Թվարկենք նաև նման գործընթացներում ներգրավված հիմնական դերակատարներին՝ մեծ տերություններ, պետություններ, ոչ պետական կազմավորումներ, ահաբեկչական կազմակերպություններ, ոչ կառավարական կազմակերպություններ, անդրազգային կորպորացիաներ, քաղաքական կուսակցություններ, շահերի խմբեր, անհատներ:

Մի քանի խոսք մարտահրավերների մասին: Ռազմավարական նարատիվի կառուցման գործընթացը անընդհատ բնույթ է կրում, ենթակա է ռիսկերի, մարտահրավերների, փոփոխությունների, հարմարեցումների: Այսօր նարատիվների պայքար է ընթանում, առկա է մրցակցություն: Բացի միջազգային հարաբերություններից, փոխվել է նաև մեդիայի միջավայրը՝ էկոլոգիան: Միայն ավանդական մեդիայի վերահսկողական, այսպես կոչված, gatekeeping-ի նրբությունների իմացությունը բավարար չէ, քանզի համացանցը ստիպում է գործ ունենալ արդեն netkeeping-ի հետ: Իսկ սա արդեն շատ բարդ է:

Պետք է հաշվի առնել նաև, թե ինչ կարող ես ասել արտաքին/ ներքին լսարանին, արդյոք լեգիտիմություն ունեն, ինչպիսին են առկա ներքին/արտաքին սպասումներն ու պատկերացումները պետությանդ մասին: Կարևոր են նաև սեփական պատմության մասին պատկերացումները (ով ենք մենք), երկրի միջազգային վարկը, այն, թե մարդիկ ինչ գիտեն և ինչ կարծիք ունեն քո պետության կողմից վարվող քաղաքականության և անցյալի գործողությունների վերաբերյալ և այլն:

Ռազմավարական նարատիվի գործադրումն այսօր բարդացել է, քանզի դրանց մրցակցությունը մեծ է, իսկ տեղեկատվական դաշտի ազատության պայմաններում վերահսկողությունն անհնար է դառնում: Դրա համար, ինչպես նշում են որոշ հեղինակներ, ռազմավարական նարատիվի համատեքստը չպետք է ֆիքսված լինի, այն պետք է լինի բաց մշտապես բանակցելու համար, քննարկման և մասնակցության հրավիրի մյուս դերակատարներին:

**ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ:
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՀԱՅ-ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սամվել Մարտիրոսյան

Հայաստանը և հայությունը հանդիսանում են քարոզչական պատերազմների թիրախ և ակտիվ դերակատար: Հիմնական քարոզչական ուղղություններ են Ադրբեջանը և Թուրքիան: Սակայն վերջին տարիների ընթացքում Հայաստանի հիմնական հակառակորդը Ադրբեջանն է:

Հակաադրբեջանական քարոզչական պատերազմներն ընթանում են մի քանի շերտով: Հիմնական քարոզչական ուղղություններ են դիվանագիտական և լրատվամիջոցների միջոցով տեղեկատվական հոսքերի ձևավորումը, գիտական ոլորտում ընթացող հակամարտությունը: Բացի դրանից, որպես հարթակներ օգտագործվում են սոցիալական ցանցերը, իսկ միջոցներից են կիրերհարձակումները:

Նման հակամարտության ընթացքում կարևորագույն հանգամանք է հակառակորդի լրատվական դաշտի օգտագործումը սեփական շահերի համար: Հայաստանյան լրատվական դաշտը բավական հաճախ է նման հարձակումների թիրախ դառնում, ինչի հետևանքով ադրբեջանական քարոզչությունը ներթափանցում է հայաստանյան ներքին տեղեկատվական դաշտ:

Հայաստանյան մամուլի թերացումները երևան են գալիս կոնկրետ օրինակները ուսումնասիրելիս:

Այսպես, 2014 թվականի հունիսի 18-ին ադրբեջանական մամուլը ապատեղեկատվություն նետեց ցանց: Բաքվում ՆԱՏՕ-ի խորհրդաժողովին մասնակցող ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Կորյուն Նահապետյանի անունից կեղծ տեղեկատվություն տարածվեց: ԱՊԱ (APA) ադրբեջանական լրատվական գործակալությունը հետևյալ կեղծ մեջբերումը կատարեց.

«Корюн Нагапетян попросил азербайджанскую делегацию не называть армян оккупантами: «Покорно прошу вас. Мы прибыли сюда, чтобы войны больше не было. Мы не желаем войны. У Армении нет ни желания, ни сил воевать»⁴¹:

Հայաստանյան լրատվական կայքերը, առանց տեղեկությունը ճշտելու, այն արտատպեցին և նույնիսկ վերլուծություններ արեցին: Օրինակ՝ Zham.am-ը մեծ նյութ պատրաստեց⁴² գրելով, որ անթույլատրելի է այդպիսի անպատասխանատու ելույթներով հանդես գալը, հետո եզրակացրեց. «Մտածե՞ք սրա մասին, քանզի դա առաջին հերթին հենց ձեր շահերից է բխում»:

Հայկական լրագրության մեջ դա լուրջ խնդիր է. լրատվամիջոցներն Ադրբեջանից եկող տեղեկատվությունը շատ հաճախ արտատպում են⁴³ առանց դրանք ստուգելու կամ փաստերը ճշտելու: Իսկ ադրբեջանական լրագրության առանձնահատկությունն այն է, որ երրորդ կողմ հանդիսացող քաղաքական գործիչների՝ Արցախի հետ կապված հայտարարությունները գրեթե միշտ միտումնավոր խեղաթյուրվում են, որպեսզի ադրբեջանցիներին ձեռնտու թեզերը շրջանառվեն ուրիշների շուրթերով: Հաշվի է առնվում այն փաստը, որ հետագայում տրվող հերքումներն ավելի քիչ ընթերցող են ունենում: Բացի դրանից, շատ հաճախ հերքում չի էլ կատարվում, քանի որ հայտարարություն անողները հետագայում դժվար հասանելի են լինում հայաստանյան լրագրողների համար:

Փաստորեն, դասական լրագրության կանոններին չհետևելու, ապատեղեկատվություն արտատպելու հետևանքով հայաստանյան լրատվական կայքերը Ադրբեջանի քարոզչության մասնա-

⁴¹ Нагапетян К. Покорно прошу вас. Мы прибыли сюда, чтобы войны больше не было. 18.06.2014. «<http://ru.apa.az/print/273678>»

⁴² «Ձեր նմանները խայտառակում են ռեսպուբլիկան». 18.06.2014: Պահպանված տարբերակը: Կայքի վրայից նյութը հեռացվել էր: <<https://www.evernote.com/shard/s8/sh/0de4a41a-71b7-4407-9179-dc37393b523f/9ca1d4361c4dd55f93374d97a8fc28cf>>

⁴³ Ինչպես է ադրբեջանական ապատեղեկատվությունը ներթափանցում Հայաստան. «<http://www.banman.am/2014/06/azerbaijan-fake-koryun-nahapetyan.html>»

գետների ձեռքում դառնում են գործիք: Ադրբեջանական քարոզչական թեզերի արտատպումը լրջորեն ուժեղացնում է դրանց ազդեցությունը, քանի որ դրանց դրույթները լեզվափոխանակում են հայաստանյան հարթակների կողմից:

Քարոզչության նպատակներից մեկը հակառակորդի հասարակության վրա ազդեցություն ունենալն է, բարոյալքման մթնոլորտ ստեղծելը, ցանկացած թեզ շրջանառության մեջ մտցնելը: Առանց ստուգելու տեղեկատվություն արտատպելով՝ հայաստանյան լրագրողներն իրենք են կատարում ադրբեջանական պետական քարոզչական աշխատանքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադրբեջանական մամուլը արցախյան հարցում գրեթե միշտ ուղղորդված ապատեղեկատվություն կամ քարոզչական նյութեր է տարածում, Հայաստանում դրանք արտատպելիս պետք է նշվի, որ ներկայացվածը չճշտված տեղեկատվություն է: Ավելին, դրա հիման վրա վերլուծություն կամ ինչ-որ ենթադրություններ անել ընդհանրապես չի կարելի:

Հայաստանյան լրատվամիջոցներում հաճախ կարելի է հանդիպել նյութերի, որտեղ լրագրողը գրում է՝ «Ինչպես հայտնում է ԱՊԱ-ն...»՝ չնշելով անգամ, որ ԱՊԱ-ն ադրբեջանական գործակալություն է, ինչն ընթերցողը պարտավոր չէ իմանալ: Եվ ստեղծվում է իրավիճակ, երբ հայաստանյան լրատվամիջոցը փաստացի հաստատում է ադրբեջանական լրատվամիջոցի տարածած տեղեկատվությունը:

Եվս մեկ օրինակ, որը վերաբերում է ադրբեջանական լրատվամիջոցների նյութերի առանց ֆիլտրելու, ստուգելու, մեկնաբանելու վերահրապարակելուն: Մի կողմից՝ նման վարվելակերպը բերում է նրան, որ մեծ քանակությամբ ապատեղեկատվություն է ներթափանցում հայաստանյան լրատվական դաշտ, մյուս կողմից՝ ավելի վտանգավոր խնդիրը ադրբեջանական հակահայկական քարոզչության վերարտադրությունն ու տարածումն է հայաստանյան հասարակության մեջ:

Նման դեպք եղավ 2013թ. հուլիսի 22-ին, երբ mamul.am կայքը վերարտադրեց armenia.az հայալեզու ադրբեջանական քարոզչական կայքի նյութը. «Զորահանդեսը ցուցադրեց ադրբեջանական բանակի ուժը». Իլիամ Ալիև⁴⁴: Տվյալ նյութը Իլիամ Ալիևի՝ անմիջականորեն հայաստանյան հասարակությանն ուղղված քարոզչական ելույթ էր, որը բառացիորեն մեջբերվել էր հայաստանյան կայքի կողմից:

Բացի այդ, նյութի վերջում ակտիվ հղում էր արվել աղբյուրին՝ Իլիամ Ալիևի պաշտոնական կայքի այն էջին, որտեղ տեղադրված էր տվյալ ելույթը: Փաստորեն, հայկական կայքը մեկ նյութում բոլոր հնարավոր միջոցներով դարձել էր ադրբեջանական պաշտոնական քարոզչության տարածողը:

Սրանք երկու վառ օրինակներ են, սակայն այսպիսի դեպքեր բավական հաճախ են կրկնվում: Նման մոտեցումները գուցե աշխատում են ի շահ որոշ լրատվամիջոցների, սակայն հասարակության տեսանկյունից առնվազն մտահոգիչ երևույթներ են: Հայաստանի լրատվամիջոցները պետք է հաշվի առնեն մի քանի հանգամանք.

ա. Արցախի հետ կապված՝ ադրբեջանական լրատվամիջոցների տարածած բոլոր հայտարարությունները պետք է ընդունել որպես կարծիք, ոչ թե փաստ, և պետք է պարտադիր ստուգել տեղեկատվությունը:

բ. Տեղեկատվությունը պետք է ստուգել մի քանի աղբյուրից:

գ. Նման դեպքերում կարելի է պատվիրակության անդամների հետ նախապես պայմանավորվել տեղեկատվություն տրամադրելու մասին:

Հայաստանյան լրատվամիջոցների՝ ադրբեջանական քարոզչության հետ կապված խնդիրներն առաջանում են ոչ միայն դասական լրագրության կանոններին չհետևելու պատճառով, այլև այն դեպքում, երբ լրատվամիջոցի խմբագրության հիմնական

⁴⁴ «Զորահանդեսը ցուցադրեց ադրբեջանական բանակի ուժը». Իլիամ Ալիև, 12.07.2013: Պահպանված տարբերակը: Կայքի վրայից նյութը հեռացվել էր:

աշխատանքային սկզբունքը տնտեսական շահն է և ընթերցողին բոլոր միջոցներով դեպի կայք բերելը:

Բերենք նման օրինակ, որը վերաբերում է արհեստական տագնապ ստեղծելուն: «Հայելի» ակումբը հուլիսի 14-ին իր կայքում նյութ էր տեղադրել «Ադրբեջանը պատերազմ է հայտարարում» վերնագրով⁴⁵: Տեքստից պարզ է դառնում, որ խոսքը միայն հերթական սպառնալիքի մասին է, որը տարածել է Ադրբեջանի արդեն նախկին պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը: Սաֆար Աբիևը տարիներ շարունակ հայտնի էր որպես հայերին վերջնագրեր տարածող պաշտոնյա: Եթե լրագրողը տեղյակ չէ, ապա խմբագիրը պետք է տեղյակ լինի այս հանգամանքին: Բայց խնդիրն իրականում ավելի լուրջ է, քանի որ լրատվամիջոցն ակնհայտորեն դիմում է մեքենայության, ստեղծում է խուճապի վտանգ՝ լավ իմանալով, որ ընթերցողի վրա մեծ տպավորություն են թողնում վերնագրերը: Հաշվի առնելով նաև սահմանում տիրող լարված իրավիճակը՝ պարզ է դառնում, որ լրատվամիջոցը այցելությունների խնդիր է լուծում՝ ակնհայտորեն սադրիչ դեր կատարելով:

Հայաստանյան լրագրողների և խմբագիրների մի մասի ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը նպաստում է ադրբեջանական քարոզչական մեքենայի գործունեությանը: Մյուս կողմից՝ Ադրբեջանը երկիր է, որտեղ իշխանությունները վերջնականորեն ճնշել են խոսքի ազատությունը, ողջ լրատվական դաշտը վերահսկելի են դարձրել նախագահի աշխատակազմի կողմից, ինչն ավելի վերահսկելի է դարձնում տեղեկատվական դաշտը՝ հայկական ազդեցությունները կանխելու համար: Ահա թե ինչու հայաստանյան լրատվամիջոցների պատասխանատվությունը աճում է, և լրագրողներն ու խմբագիրները պարտավոր են սխալներ թույլ չտալ՝ Ադրբեջանի քարոզչական մեքենայի աջակիցները չդառնալու համար:

⁴⁵ Ադրբեջանը պատերազմ է հայտարարում, 14.07.2014: Պահպանված տարբերակը: Կայքից նյութը հեռացվել էր: «<https://www.evernote.com/shard/s8/sh/32b32901-23e6-4f22-a017-8cc3cec80e11/94779512b6623586cc6b6b88099d0afa>»

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԹՎԵՐՈՎ

Տիգրան Հարությունյան

2000-ական թվականներից Հարավային Կովկասի երեք երկրներում սկսեցին բարեփոխել գիտության համակարգը, որոնք Խորհրդային Միության փլուզումից հետո մեծ մասամբ շարունակում էին առաջնորդվել Խորհրդային գիտակազմակերպչական ավանդույթներով:

Բարեփոխումները երեք երկրներում ընթանում են տարբեր ուղղություններով և արագությամբ:

2007-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում ստեղծվեց Գիտության պետական կոմիտեն⁴⁶, որը Հայաստանում գիտական քաղաքականություն մշակող և իրականացնող, ինչպես նաև գիտական համակարգը ֆինանսավորող պետական մարմինն է: Հայաստանն ընտրել է գիտության բարեփոխումների համակցված տարբերակ՝ ներդնելով աշխարհի տարբեր երկրների հաջողված փորձը (հիմնական ուղղություն ընտրելով եվրոպական գիտակազմակերպչական փորձը):

2010 թվականին ընդունվել է ՀՀ գիտության զարգացման ռազմավարությունը, 2011-ին՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը: Մինչ այդ՝ 2006 թվականից Հայաստանում նորարարական տեխնոլոգիաների զարգացման և ներդրման քաղաքականությունն իրականացնում էր ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

Վրաստանում 2010 թվականից գիտության և տեխնոլոգիաների ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնում է Շոթա Ռուսթավելու անվան գիտության ազգային ֆոնդը, իսկ Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիան լուծարվել է՝ դառնալով գիտության քաղաքականության ոլորտում Խորհրդատվական մարմին: Ակադեմիայի կազմում գործող բոլոր ինս-

⁴⁶ Գիտության պետական կոմիտե. “<http://scs.am/>”

տիտուտները միացվեցին բուհերին: Վրաստանը ընտրեց գիտության կազմակերպման ամերիկյան ուղղությունը (գիտության բարեփոխումների ռազմավարությունը բաց աղբյուրներում բացակայում է):

Ադրբեջանում գիտության ֆինանսավորումը հիմնականում իրականացնում է Ֆինանսների նախարարությունը: 2003 թվականից գիտության ոլորտի կառավարումն իրականացնում է Ադրբեջանի ԳԱԱ-ն: Տնտեսական զարգացման նախարարությունն էլ մասնակցում է նորարարական, գիտական և տեխնոլոգիաների զարգացման քաղաքականության մշակմանը: Առայժմ չկա գիտության և նորարարական տեխնոլոգիաների զարգացման առաջնությունները որոշող միասնական պետական մարմին: Ադրբեջանում մինչ այժմ գիտության մասին օրենք ընդունված չէ: Այնտեղ գիտության ոլորտը կարգավորվում է մի քանի փաստաթղթերով՝ 2003 թ. ընդունված «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման ռազմավարությամբ», 2005 թ. ընդունված «Տարածաշրջանային նորարարական գոտու ստեղծման ծրագրով» և «Վառելիքաէներգետիկ համակարգի զարգացման պետական ծրագրով»:

Ադրբեջանում ընթացող գիտության բարեփոխումները նույնպես կրում են համակցված բնույթ, և կիրառվում է տարբեր երկրների փորձը (գիտության բարեփոխումների ռազմավարությունը, ինչպես Վրաստանի դեպքում, բաց աղբյուրներում բացակայում է): Գիտության բարեփոխումների ընթացքը և դրանց արդյունքներն ավելի լավ պատկերացնելու ընդունված ուղիներից մեկը գիտաշխատողների արդյունքների գիտաչափական տվյալների համեմատումն է:

Գիտության ոլորտում աշխարհում ամենահամապարփակ տեղեկատվական շտեմարանը համարվում է *Elsevier*⁴⁷ հրատարակչական կորպորացիայի կողմից ստեղծված *Scopus*⁴⁸ գիտաչափական-տեղեկատվական բազան:

⁴⁷ Elsevier. “<http://www.elsevier.com/>”

⁴⁸ Elsevier: Scopus. “<http://www.elsevier.com/online-tools/scopus>”

Այն տրամադրում է հոդվածների, հղումների, գրախոսվող գրականությանը հետևելու և վերլուծելու նորարարական գործիքներ: Ներառում է առավել համապարփակ ակնարկ աշխարհի գիտական արտադրանքի մասին տարբեր ոլորտներում՝ բնական և հումանիտար գիտությունների, տեխնոլոգիաների, բժշկության, հասարակական գիտությունների, արվեստի և այլն:

1996 թվականից Scopus-ը տրամադրում է տեղեկություններ աշխարհում տպագրվող հազարավոր գիտական ամսագրերում տեղ գտած հոդվածների և գրախոսվող գրականության վերաբերյալ: Ներկայումս այդ ցուցակում ընդգրկված են 5000 հրատարակչություններում տպագրվող 18 000 գիտական ամսագրեր: Scopus-ի գիտաչափական գործիքներին ծանոթանալու և առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է համապատասխան գրանցում, սակայն տրամադրվում է նաև բաց տեղեկատվություն, որը նույնպես պակաս հետաքրքիր չէ:

*SCImago Journal & Country Rank (SJR)*⁴⁹ տեղեկատվական պորտալում հնարավոր է ծանոթանալ ինչպես ամսագրերին, այնպես էլ առանձին երկրներին վերաբերող գիտաչափական տվյալներին: SJR-ը հնարավորություն է տալիս պարզելու, թե քանի հոդված է տպագրվել, որ ոլորտներին վերաբերող, քանի հղում է եղել այդ հոդվածներին, քանի հոդված է տպագրվել միջազգային համագործակցությամբ և այլն:

Գիտական արտադրանքի մասին կարելի է դատել SJR-ի կողմից տրամադրվող տվյալներից:

Գիտության բարեփոխումների արդյունավետության մասին կարծիք կազմելու համար ճիշտ է դիտարկել բարեփոխումների մեկնարկից սկսած՝ 2008-2012 թթ. գիտաչափական տվյալների թվային փոփոխության դինամիկան:

Որոշ քանակական և որակական տվյալներ, ըստ երկրների, ներկայացված են աղյուսակների տեսքով:

⁴⁹ Scimago Journal and Country Rank. “<http://www.scimagojr.com/>”

Աղյուսակ 1. Հայաստան*

Թ/Թ	Հոդ.	Հղման ներթակա հոդ.	Հոդ.	Ինքնահոդ.	Հոդ./հոդ.	Հոդ. - Ինքնահոդ/ հոդ.	Հղումով Հոդ.	Առանց իդ. հոդ.	Միջազգ. համագործ. %	Աշխարհ. %
2008	594	589	6419	1116	10.86	8.928	392	202	53,87	0,03
2009	672	660	4591	859	6.832	5.554	431	241	50,45	0,03
2010	779	763	4861	1255	6.240	4.629	477	302	52,37	0,03
2011	971	942	5265	1091	5.422	4.299	468	503	50,57	0,04
2012	1114	1053	7421	920	6.662	5.836	536	578	59,25	0,04

* Աղյուսակում ներկայացված թվերը 2015 թվականի ապրիլի դրությամբ են:

Աղյուսակում ներկայացված տվյալներից հետևում է, որ վերջին հինգ տարում Հայաստանում աշխատող գիտաշխատողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հոդվածների թիվը կրկնապատկվել է, ավելացել է միջազգային համագործակցության արդյունքում տպագրվող հոդվածների թիվը, մեծացել է մասնաբաժինը Scopus-ի կողմից ներկայացված՝ ամբողջ աշխարհում տպված հոդվածների մեջ: Բարձր է նաև հղումների բացարձակ թիվը:

Աղյուսակում ներկայացված որոշ տվյալների թվային արժեքները 2008-ից հետո նվազել են, մասնավորապես՝ հղումների և ինքնահղումների թիվը, հղումների և ինքնահղումների հարաբերությունը հոդվածների թվին, հղումով և ինքնահղումով հոդվածների թիվը, իսկ առանց հղումների հոդվածների թիվը աճել է:

Այս երևույթը բացատրվում է նրանով, որ տվյալները սկսում են ամբողջական դառնալ միայն 4-5 տարի հետո: Քանի որ հոդվածները նոր են տպագրվել, դրանց հղումները դեռ քիչ են, հետևաբար փոքր են նաև հղումներից կախված մյուս գիտաշափական տվյալների թվային արժեքները:

Աղյուսակ 2. Վրաստան*

Թ/Թ	Հոդ.	Հոման նթական հոդ.	Հո.	Ինքնահո.	Հո./հոդ.	Հո. - Ինքնահո/ հոդ.	Հորմով Հոդ.	Ատանց հո. հոդ.	Միջագո. համագործ. %	Աշխարհ. %
2008	542	510	4386	731	8.092	6.744	357	185	57.87	0,03
2009	659	617	3506	492	5.320	4.574	438	221	57.21	0,03
2010	621	581	4516	823	7.272	5.947	384	237	59.42	0,03
2011	853	753	4556	784	5.341	4.422	428	425	52.17	0,03
2012	940	831	7207	625	7.667	7.002	241	499	57.23	0,04

* Աղյուսակում ներկայացված թվերը 2015 թվականի ապրիլի դրությամբ են:

Վրաստանի դեպքում պատկերն այլ է: Այնտեղ իրականացվող գիտության բարեփոխումները շոկային բնույթ կրեցին, քանի որ կտրուկ անցում կատարվեց գիտության կառավարման Եվրոպական համակարգին ավելի մոտ խորհրդային համակարգից դեպի Ամերիկյան համակարգ:

Ներկայացված տվյալներից երևում է, որ տպագրվող հոդվածների թիվն աճում է, բայց՝ դանդաղ: Միջազգային համագործակցությունը վերջին հինգ տարիներին մնում է նույն մակարդակի վրա: Չի փոխվում նաև մասնաբաժինը աշխարհում տպագրվող հոդվածների ընդհանուր թվում: Հղումների բացարձակ թիվը մոտ 35%-ով գիջում է հայ հեղինակների հոդվածների հղումներին:

Աղյուսակ 3. Աղբբեջան*

Թ/Թ	Հոդ.	Հղման ենթակա հոդ.	Հղ.	Ինքնատի.	Հղ./հոդ.	Հղ. - Ինքնատի/ հոդ.	Հղումով Հոդ.	Ատանց իդ. հոդ.	Միջազգ. համագործ. %	Աշխարհ. %
2008	552	546	2248	381	4.072	3.382	203	349	30.43	0,03
2009	772	759	1515	430	1.962	1.405	287	485	30.96	0,03
2010	786	772	2319	589	2.950	2.201	304	482	37.28	0,03
2011	891	863	2220	387	2.492	2.057	280	611	37.82	0,04
2012	1002	968	3389	314	3.382	3.069	278	724	39.82	0,04

* Աղյուսակում ներկայացված թվերը 2015 թվականի ապրիլի դրությամբ են:

Scopus-ի տրամադրած տվյալներից երևում է, որ Ադրբեջանում իրականացվող գիտության բարեփոխումները նույնպես որոշակի արդյունք տալիս են, ինչի հիմքում, սակայն, մեծմասամբ ընկած է ֆինանսավորման ծավալների աճը:

Ավելացել է տպագրվող հոդվածների թիվը: Ակտիվացել է նաև միջազգային համագործակցությունը: Չի փոխվել Ադրբեջանի գիտաշխատողների հեղինակած հոդվածների մասնաբաժինը աշխարհում տպագրված հոդվածների ընդհանուր թվի մեջ:

Բերված տվյալներից կարող ենք դատել, որ ադրբեջանցի հեղինակների հոդվածների հղումների թիվը մոտ երեք անգամ զիջում է հայ հեղինակների հոդվածների հղումների թվին:

Երեք երկրների գիտության բարեփոխումների ընթացքը և գիտնականների աշխատանքների արդյունավետությունն ավելի ամբողջացնելու համար հարկ է անդրադարձ կատարել նաև այլ տվյալների, որոնք բացակայում են Scopus-ի բաց շտեմարանում: Մասնավորապես, գիտության պետական ֆինանսավորման ծավալները բացարձակ թվերով և ՀՆԱ-ի մասնաբաժնով, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ընդգրկված մարդկանց թիվը այս երեք երկրներում և մեկ միլիոն բնակչի հաշվով տպագրված հոդվածների թիվը:

Աղյուսակ 4^{50*}

2012	ՀՆԱ ⁵¹	Գիտ. ՀՆԱ %	Բացարձակ գումարը	Գիտաշխատողների քանակը	Ֆինանսավորման ծավալը մեկ գիտաշխատողի հաշվով	Հոդվածների թիվը մեկ մլն բնակչի հաշվով
Հայաստան	9951 մլն	0,27%	26.87 մլն	6926	3880	365.34
Ադրբեջան	66600 մլն	0,2%	133.2 մլն	22500	5920	101.87
Վրաստան ⁵²	15750 մլն	0,4%	63 մլն	3200	19687	188.37

* Աղյուսակում ներկայացված թվերը 2015 թվականի ապրիլի դրությամբ են:

⁵⁰ Տվյալները վերցված են՝ <http://www.increast.eu/en/1270.php>.

⁵¹ Տվյալները վերցված են՝ <http://data.worldbank.org/country>.

⁵² Վրաստանի դեպքում գիտաշխատողների թիվը և ֆինանսավորման ծավալները այնքան էլ վստահելի չեն:

Աղյուսակում բերված գումարները հաշվված են ԱՄՆ դոլարով և հաշվի չեն առնված միջազգային, միջպետական և այլ՝ մասնավոր, դրամաշնորհային ծրագրերով ստացված գումարները: Վերջին աղյուսակի տվյալներից երևում է, որ չնայած Հայաստանում գիտությանը տրամադրվող գումարները ծավալով ամենափոքրն են, սակայն ավելի արդյունավետ են ծախսվում և ստացված գիտական արդյունքը, հարևանների հետ համեմատած, ամենաբարձրն է, ինչը վկայում է վերջին հինգ տարիներին Հայաստանում ընթացող բարեփոխումների դրական ընթացքի մասին: Եվ Վրաստանը, և՛ Ադրբեջանը զիջում են Հայաստանին գիտության ոլորտում ծախսերի արդյունավետությամբ և տված գիտական արդյունքի քանակով ու որակով:

**ՍՓՅՈՒՌՔԻ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ**

Արեստակես Սիմավորյան

Սփյուռք ունեցող երկրներին բնորոշ է համազգային ներուժի համախմբումը հայրենի պետության հովանու ներքո: Նման քաղաքականությունը պայմանավորված է մի շարք նկատառումներով, որոնցից առաջին հերթին արժե հիշատակել հետևյալ երկուսը: Նախ՝ հայրենիքի շուրջ արտերկրի նշանավոր անհատների, կազմակերպությունների, կապիտալի և այլնի համախմբումը լուրջ հիմք է սփյուռքում ազգային ինքնագիտակցության պահպանման և ամրապնդման համար, որի գերնպատակը օտար միջավայրում ուժացման սպառնալիքին արդյունավետ դիմագրավելն է: Երկրորդ կարևոր նկատառումը համազգային խնդիրների լուծման ուղղությամբ հայրենիքի և սփյուռքի ջանքերի համատեղումն է: Հայրենիք-սփյուռք համակարգված փոխգործակցությունն այնքան մեծ նշանակություն ունի ընդհանուր խնդիրների լուծման համար պայքարում, որ մի շարք երկրներում այն բարձրացված է պետական քաղաքականության մակարդակի:

Հիշյալ և այլ նկատառումներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետությունը միշտ էլ գնացել է սփյուռքի հետ համագործակցությունը խորացնելու ճանապարհով: Այն իր դրսևորումը ստացել է Հայաստանի պետական կառավարման համակարգում սփյուռքահայ գործիչներին ընդգրկելու, սփյուռքահայ գիտնականներին հայաստանյան գիտակրթական հաստատությունների կողմից իրականացվող ծրագրերին մասնակից դարձնելու և այլ ձևերով: Հայրենիք-սփյուռք փոխգործակցության կարևորագույն ասպարեզ է գիտական և ընդհանրապես մտավոր գործունեության բնագավառը: Այս ոլորտում համակարգված աշխատանքը կարող է էապես մեծացնել հայության մտավոր ներուժը և նպաստել Հայաստանի ու սփյուռքի առջև ծառայած մարտահրավերների դեմ պայքարի արդյունավետությանը:

Մտավոր գործունեության բնագավառում սփյուռքի հետ փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել միայն գիտական

հիմքերի վրա դրված լինելու պարագայում: Այս ասպարեզում գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների հիմնական խնդիրն է գիտության ոլորտում համազգային ներուժի բացահայտումը և արդյունավետ համագործակցության ուղիների վերհանումը: Այս գիտակցությամբ են պայմանավորված վերջին շրջանում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից գործադրվող համապատասխան ջանքերը, որոնցից արժե հիշատակել հետևյալները.

- ՀՀ սփյուռքի նախարարության ջանքերով և այլ կառույցների հետ համագործակցությամբ կազմակերպված տարբեր մասնագիտությունների գծով (բժիշկներ, ճարտարապետներ, իրավաբաններ, քաղաքագետներ, հայագետներ և այլն) կազմակերպված համահայկական համաժողովները,
- 2009թ. մայիսի 7-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը», որի իրականացման մեջ ներգրավված են ինչպես ՀՀ կառավարական գերատեսչությունները (ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ), այնպես էլ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան⁵³:
- ՀՀ պետական գերատեսչությունների (մասնավորապես՝ Սփյուռքի նախարարության) պատվերով սփյուռքի մտավոր ներուժի բացահայտման ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտությունները:

Հայության մեծ մասի հետ մեկտեղ՝ նրա մտավոր ռեսուրսների զգալի մասը նույնպես գտնվում է ՀՀ և ԼՂՀ սահմաններից դուրս: Արտերկրում հայ մտավորականներն իրենց գործունեությունը ծավալում են ինչպես իրենց երկրների ակադեմիական կառույցների և «ուղեղային կենտրոնների», այնպես էլ հայկական կառույցների շրջանակներում: Ըստ այդմ՝ սփյուռքի գիտավերլուծական ներուժը կարելի է բաժանել երկու մակարդակի՝ անհատական և ինստիտուցիոնալ:

⁵³ Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին (30.04.2009 N 459-Ն): ”<https://www.e-gov.am/gov-decrees/item/16059/>”

Անհատական մակարդակ

Անհատական մակարդակում գտնվում են արտերկրի ակադեմիական կառույցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող ազգությամբ հայ մասնագետները: Բնակվելով աշխարհի տարբեր, այդ թվում նաև առաջատար երկրներում՝ հայազգի մտավորականության ներկայացուցիչներն ընդգրկված են այդ երկրների գիտական և վերլուծական կառույցների գործունեության մեջ:

Աղյուսակ 1. Հումանիտար ոլորտի հայ մասնագետները՝ ըստ երկրների⁵⁴

Ռուսաստանի Դաշնություն	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Այլ երկրներ
250	130	138
տնտեսագիտություն (48)	քաղաքագիտություն (38)	քաղաքագիտություն (34)
պատմություն (32)	պատմություն (31)	պատմություն (32)
փիլիսոփայություն (31)	տնտեսագիտություն (19)	տնտեսագիտություն (18)
իրավաբանություն (19)	իրավաբանություն (19)	բանասիրություն (8)

Նրանք կարևոր դերակատարում ունեն ԱՄՆ, Ռուսաստանի, եվրոպական և ԱՊՀ երկրների հետազոտական և ակադեմիական կառույցներում, ինչպես նաև գործնական քաղաքականության վրա անմիջական ազդեցություն ունեցող վերլուծական կառույցներում՝ «ուղեղային կենտրոններում»: Նրանցից շատերը զգալի հաջողությունների են հասել: Օրինակ՝ կարելի է վկայակոչել ԱՄՆ Քարնեգիի հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորյանին, Բարուխի քոլեջի դեկան Երվանդ Աբրահամյանին, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) պրոֆեսոր Տա-

⁵⁴ Մասնագետները հաշվառվել են «Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ» (հեղ. Սիմավորյան Ա., Հարությունյան Գ., Հովյան Վ., Ղանալանյան Տ., Երեվան, 2013) հետազոտության շրջանակներում:

րոն Աջեմօղլուին, ՌԴ ԳԱ համաշխարհային պատմության ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Չուբարյանին և այլն:

Արտերկրի հայության մտավոր ներուժը (թե՛ ակադեմիական և թե՛ փորձագիտական ոլորտներում) արդյունավետ օգտագործվելու պարագայում կարող է զգալի օգուտներ բերել թե՛ Հայաստանին, թե՛ սփյուռքին: Լինելով աշխարհի առաջատար տերությունների գիտական և փորձագիտական հանրությունների մի մասը՝ արտերկրի հայ մտավորականները շատ ավելի լավ են տեղեկացված իրենց երկրներում տիրող քաղաքական իրավիճակին, ներքին և արտաքին քաղաքական գործընթացներին և դրանց միտումներին, իշխանությունների և ընդդիմության տրամադրություններին և այլն, ինչը եթե ոչ անմիջականորեն, ապա միջնորդավորված կերպով անդրադառնում է մեր տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակի, այդ թվում նաև Հայաստանի տարածաշրջանային դրության վրա:

Նրանցից շատերը համաշխարհային գործընթացներից, աշխարհի այս կամ այն տարածաշրջանում կամ երկրում տեղի ունեցող կամ սպասվելիք իրադարձություններից տեղեկացված լինելու շատ ավելի լայն հնարավորություններ և հասանելիություն ունեն, քան հայաստանյան գիտական կամ փորձագիտական շրջանակները: Իսկ ներկայիս գլոբալացման պայմաններում աշխարհի տարբեր կետերում տեղի ունեցող իրադարձությունները, իսկ համաշխարհային գործընթացները՝ առավել ևս, չեն կարող չազդել նաև ՀՀ քաղաքական, տնտեսական և այլ ոլորտների դրության վրա:

Սփյուռքահայ գիտնականներն ու փորձագետները հանդիսանում են իրենց երկրների գիտական և փորձագիտական մշակույթի ու փորձի (ամերիկյան, ռուսական, եվրոպական և այլն) կրողներն են, ինչի փոխառումը կամ ներմուծումը Հայաստան կարող է զգալիորեն հարստացնել տեղի գիտական և փորձագիտական մշակույթն ու փորձը՝ էապես մեծացնելով հայաստանյան՝ նոր ձևավորվող փորձագիտական դպրոցի մտավոր կարողությունները:

Անհատական մակարդակով արտերկրի հայության մտավոր ներուժը ողջ հայության խնդիրների լուծմանը ծառայեցնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել արդի պայմաններին բնորոշ երկու իրողություն: Դրանք են.

- Արտերկրում ինտելեկտուալ ոլորտում բարձր դիրքի հասած հայազգի մտավորականները կտրված են համայնքային կյանքից՝ գրեթե ամբողջությամբ և անմիջականորեն ինտեգրված լինելով տվյալ երկրի հասարակության մեջ: Նրանց մտավոր գործունեության արդյունքները կարծես թե լիովին ի սպաս են դրվում այդ երկրների պետական-քաղաքական կառույցներին՝ ծառայեցվելով վերջիններիս ազգային շահերին:
- Մեր օրերում նրանց զանգվածային հայրենադարձությունը՝ վերադարձը և բնակությունը Հայաստանում, իրատեսական չէ՝ հաշվի առնելով մի կողմից նրանց խորը ինտեգրվածությունը իրենց երկրների կյանքում, իսկ մյուս կողմից՝ ՀՀ ոչ այնքան բարենպաստ պայմանները:
- Մեր օրերում համաշխարհային մակարդակով առկա նոր իրողությունները ենթադրում են հայության ներուժի համախմբման ավանդական ձևերին ու եղանակներին նորերի ավելացում⁵⁵: Տեղեկատվական և հեռահաղորդակցական միջոցների զարգացմամբ պայմանավորված՝ ցանցային կառույցների՝ գնալով աճող դերը հանրային կյանքում հարկադրում է Հայաստանի երրորդ հանրապետության պատկան մարմիններին գործնական կյանքում կիրառել սփյուռքի ներուժի համախմբման և արդյունավետ օգտագործման համապատասխան մեխանիզմներ:

Սույն իրողությունները հաշվի առնելով՝ նպատակահարմար է շեշտը դնել արտերկրի հայ գիտնականների և փորձագետ-վերլուծաբանների հետ հեռավար աշխատանքի վրա, ինչը կարող է ստանալ դրսևորման հետևյալ ձևերը.

⁵⁵ Հայաստանի Հանրապետությունը իր ձևավորումից (1918թ.) ի վեր վարել է հայրենիքի հովանու ներքո հայության մտավոր ներուժի համախմբման և ազգային շահերին ծառայեցնելու քաղաքականություն: Այդ նպատակով են թե՛ առաջին և թե՛ երկրորդ հանրապետություններում կազմակերպվել արտերկրում բնակվող հայկական մտավոր, քաղաքական, գինվորական և այլ շրջանակների ներկայացուցիչների «հայրենադարձության» ծրագրեր: Օրինակ՝ 1920-ական թթ. Ալ. Մյասնիկյանի կողմից իրականացված արտերկրի հայկական մտավորական ռեսուրսների մի մասի վերադարձը նորաստեղծ Խորհրդային Հայաստան և նրանց մեծ ավանդը վերջինիս զարգացման գործում այդ քաղաքականության ամենավաղ դրսևորումներից է:

Անհատական հետազոտությունների պատվիրում: Հայաստանի և հայության համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներով կարելի է բարձրորակ հետազոտություններ պատվիրել սփյուռքի ներկայացուցիչ հայ փորձագետներին:

Կոլեկտիվ հետազոտությունների պատվիրում: Նման թեմաներով կարելի է պատվիրել նաև կոլեկտիվ հետազոտություններ, որոնցում ընդգրկված կլինեն սփյուռքի մեկից ավելի փորձագետներ և գիտնականներ: Այս կերպ, ըստ էության, կձևավորվեն սփյուռքի հայ փորձագետների աշխատանքային խմբեր: Կարող են կատարվել նաև կոլեկտիվ հետազոտություններ՝ դրանցում ներգրավելով սփյուռքահայ և հայաստանաբնակ մասնագետների:

Տարբեր ձևաչափերով հանդիպում-քննարկումների կազմակերպում: Կոնկրետ խնդիրների շուրջ (Ղարաբաղյան հիմնահարց, հայ-թուրքական հարաբերություններ, Հայաստանի զարգացման ռազմավարություն և այլն) կարելի է Հայաստանի և սփյուռքի գիտնականների ու փորձագետների մասնակցությամբ պարբերաբար կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ և այլ ձևաչափերով հանդիպում-քննարկումներ: Նպատակահարմար է լայնորեն կիրառել ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների հնարավորությունները (օրինակ՝ առցանց դասախոսությունների, գիտաժողովների և այլնի կազմակերպում):

Արտերկրի հայ գիտնականների և փորձագիտական հանրության հետ հեռավար աշխատանքի դյուրացումը և արդյունավետության բարձրացումն անխուսափելիորեն ենթադրում են նաև ինստիտուցիոնալ կառույցների ստեղծում, որոնց ամբողջությունը պետք է ունենա ցանցային նկարագիր: Ըստ այդմ՝ նպատակահարմար է տարբեր երկրներում (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա և այլն) հասարակական կազմակերպությունների կարգավիճակով ստեղծել հայ փորձագետների միություններ: Ակնհայտ է, որ նման կառույցների հետ աշխատանքն ավելի մեծ արդյունավետություն կարող է գրանցել, քան առանձին անհատ փորձագետներինը:

2012թ. Հայաստանում ստեղծված Հայկական հետազոտությունների ցանցային ինստիտուտը (ՀՀՑԻ - Armenian Research Network Institute) կարելի է դիտել որպես այս ուղղությամբ կատարված առաջին քայլ: Առաջին փուլում այս ինստիտուտը ցանցային կազմակերպչական մեթոդների կիրառմամբ պետք է ձևավորի ազգային փորձագիտական հանրություն⁵⁶:

Ինստիտուցիոնալ մակարդակ

Որպես մտավոր գործունեությամբ զբաղվող ինստիտուտների սփյուռքում հիմնականում հանդես են գալիս հայագիտական կենտրոնները, որոնց թիվը ներկայումս հաշվվում է տասնյակներով (Զորյան ինստիտուտ, Հայկազյան համալսարան, Վենետիկի Մխիթարյան միաբանություն և այլն):

Աղյուսակ 2. Հայագիտական կենտրոնների քանակը՝ ըստ երկրների⁵⁷

Ամերիկա մայրցամաք	Եվրոպա	Հետխորհրդային պետություններ	Մերձավոր արևելք
ԱՄՆ (31)	Ֆրանսիա (8)	Ռուսաստան (9)	Լիբանան (7)
Արգենտինա (4)	Իտալիա (5)	Վրաստան (3)	Իրան (3)
Բրազիլիա (1)	Ավստրիա (3)	Ուկրաինա (2)	Իսրայել (2)
Կանադա (1)	Լեհաստան (3)		Սիրիա (1)
	Մեծ Բրիտանիա (3)		Կիպրոս (1)
	Շվեյցարիա (2)		Եգիպտոս (1)
	Գերմանիա (2)		
	Բուլղարիա (1)		
	Բելգիա (1)		
	Ռումինիա (1)		

⁵⁶ Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ., Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:

⁵⁷ Հայագիտական կենտրոնների մասին մանրամասն տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ., Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, 2014:

Վերջիններս, միասին վերցրած, կազմում են հայագիտության բնագավառում արտերկրի հայկական հիմնական մտավոր ներուժը: Սփյուռքի հայագիտական կենտրոնները, ունենալով ընդհանուր հայագիտական թեմատիկ ուղղվածություն, այլ հատկանիշներով տարբերվում են միմյանցից: Օրինակ, ըստ գործունեության ձևի՝ դրանք ունեն գիտակրթական, հետազոտական, վերլուծական և այլ բնույթ, կամ տարբեր կարող են լինել դրանց ֆինանսավորման աղբյուրները: Ինչ վերաբերում է թեմատիկ ուղղվածությանը, ապա հարկ է նշել, որ հայագիտությունը լայն գիտական բնագավառ է և ունի իր ներքին ուղղություններն ու ճյուղավորումները: Հետևաբար ընդհանուր հայագիտական ուղղվածությունը բնավ չի նշանակում միօրինակություն հայագիտական կենտրոնների գործունեության թեմատիկայում: Որոշ կենտրոններ ունեն քաղաքական թեմատիկ ուղղվածություն, մյուսները՝ ազգագրական, սփյուռքագիտական և այլն: Միաժամանակ, ինչպիսին էլ լինեն հայագիտական կենտրոնների թեմատիկ ուղղությունները, հավասարապես մեծ է դրանց բոլորի կարևորությունը, քանի որ գործնական նշանակության տեսակետից հայագիտությունն իր ճյուղավորումներով «ազգ ձևավորող և պետականաստեղծ բնագավառ է»⁵⁸:

Անդրադառնալով ինստիտուցիոնալ մակարդակով սփյուռքի մտավոր ներուժի արդյունավետության բարձրացման խնդրին՝ նշենք, որ, ինչպես ասվեց վերը, խոսքը վերաբերում է հայագիտական կենտրոնների իրականացրած հետազոտությունների ոլորտներին: Այդ հետազոտություններն իրենց բնույթով և նշանակությամբ կարելի է բաժանել երեք մասի՝ ճանաչողական, քարոզչական և կիրառական: Ճանաչողական բնույթի հետազոտությունները կենտրոնանում են հիմնականում հայոց պատմության, հայ բանասիրության, հայկական մշակույթի, ազգագրության և այլ գիտական ուղղությունների տարաբնույթ խնդիրների վրա:

⁵⁸ Հարությունյան Գ., Հայագիտությունը՝ որպես «կրիտիկական ենթակառուցվածք», 21-րդ ԴԱԸ, 2013, № 6 (52), էջ 5:

Քարոզչական բնույթի հետազոտությունները հիմնականում գտնվում են ցեղասպանագիտության ոլորտում: Դրանց նպատակն է ինչպես հայությանը, այնպես էլ համաշխարհային հանրությանը ծանոթացնել Մեծ եղեռնի արհավիրքներին: Քարոզչական բնույթի հետազոտությունների մեջ, բացի ցեղասպանագիտական հետազոտություններից, որոշակի տեղ ունեն նաև Հայ դատի այլ խնդիրներին նվիրված ուսումնասիրությունները: Պետք է նշել, որ ճանաչողական և քարոզչական բնույթի հետազոտությունները, չնայած անմիջականորեն մեծ ազդեցություն չեն գործում գործնական քաղաքականության վրա, այնուամենայնիվ, նույնպես լիովին զուրկ չեն կիրառականությունից: Ճանաչողական բնույթի հետազոտությունների պարագայում կիրառականությունը կայանում է սփյուռքում հայ ինքնության, ազգային ինքնագիտակցության ու մշակույթի պահպանման և զարգացման մեջ:

Կարևորելով ճանաչողական և քարոզչական բնույթի հետազոտությունների նշանակությունը, որոնք գերակշռում են սփյուռքի հայագիտական կենտրոնների գործունեության մեջ, պետք է նշել, որ պակաս կարևոր չեն նաև կիրառական բնույթի հետազոտությունները, որոնց առայժմ բավարար տեղ չի տրվում: Կիրառական բնույթի հետազոտությունները նպատակահարմար է կենտրոնացնել այն հրատապ հիմնահարցերի վրա, որոնք ներկայումս ծառացած են ինչպես հայության, այնպես էլ ՀՀ-ի և ԼՂՀ-ի առջև: Այդ հետազոտությունների կիրառականությունը կլինի հայության, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի առջև ծառացած ժամանակակից հրատապ հիմնախնդիրների լուծման գործնական ուղիների մշակումն ու առաջադրումը՝ նախապես վերհանելով այդ խնդիրների առաջացման պատճառներն ու հանգամանքները: Որպես հայության առջև ծառացած հիմնահարցեր՝ անհրաժեշտ ենք համարում կենտրոնանալ հետևյալ հիմնական խնդիրների վրա.

Հայ դատ: Այս ոլորտում հետազոտությունները նպատակահարմար է կենտրոնացնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, պատճառված վնասի վերականգ-

նման, փոխհատուցման և այլ խնդիրների լուծման համար նպաստավոր քաղաքական, իրավական և այլ ուղիների մշակման վրա: **Հայաստանի ապաշրջափակում:** Այս հարցում նպատակահարմար է հետազոտությունների առարկա դարձնել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ և ԼՂՀ շրջափակման վերացման համար պայքարում արդյունավետ ռազմավարության և մարտավարության մշակման, համարժեք մեթոդների ընտրության հարցերը: Արցախյան հիմնահարցի հայանպաստ լուծում: Այս ոլորտում խնդիրները նույնպես ընդգրկում են լայն շրջանակ՝ Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության զսպումից մինչև Արցախի անկախության իրավական ճանաչում:

ՀՀ և ԼՂՀ զարգացման ծրագրեր⁵⁹: Խնդիրը վերաբերում է հայկական երկու հանրապետությունների սոցիալ-տնտեսական, գիտամշակութային, կրթական, ռազմական, ժողովրդագրական զարգացմանը, ինչպես նաև նրանց խոր ինտեգրմանը⁶⁰: Այս ոլորտը նույնպես ունի ռազմավարական նշանակություն, քանի որ առանց համապարփակ զարգացման և ինտեգրման մեր ժամանակներում լուրջ սպառնալիքի տակ կդրվի ՀՀ և ԼՂՀ անվտանգությունը:

Առաջին երեք հիմնախնդիրների ուղղությամբ հայագիտական կենտրոնները համագործակցության մեծ դաշտ ունեն սփյուռքի լոբբիստական կառույցների հետ: Մինչև այժմ վերջիններս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, Հայաստանի ապաշրջափակման, դարաբաղյան հակամարտության հայանպաստ կարգավորման համար պայքարում հիմնականում չեն օգտվել հայագիտական կենտրոնների գիտական աջակցությունից: Մինչդեռ այդ աջակցությունը կարող է էապես նպաստել նրանց պայքարի արդյունավետության բարձ-

⁵⁹ ՀՀ և ԼՂՀ զարգացման հիմնախնդիրներին անդրադարձ կատարելիս չպետք է մոռացության մատնվի նաև Ջավախքը, որը հայության աշխարհընկալումներում չպետք է տարբերվի Հայաստանի տարածաշրջաններից (Լոռի, Կոտայք, Գեղարքունիք և այլն):

⁶⁰ Խոր ինտեգրման վերջնանպատակը ՀՀ և ԼՂՀ միավորումն է մեկ պետական համակարգում, ինչին էլ պետք է միտված լինի մշակվող ծրագրերի տրամաբանությունը:

րացմանը: Լոբբիստական կառույցների և հայագիտական կենտրոնների համագործակցության արդյունքում վերջիններս կարող են վերաձվել սփյուռքի յուրահատուկ «ուղեղային կենտրոնների»՝ գիտականորեն սպասարկելով լոբբիստական կառույցների գործունեությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ և ԼՂՀ զարգացման ծրագրերին, ապա այս հարցում համագործակցության մեծ տեղ կա հայաստանյան և արցախյան իշխանությունների, քաղաքական ուժերի, ինչպես նաև գիտական և վերլուծական կառույցների հետ:

Մյուս կողմից արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառայած ամենամեծ մարտահրավերը ֆինանսական միջոցների սղությունն է, որից էլ ածանցվում են այլ խնդիրներ: Ֆինանսական խնդիրների լուծմանն աջակցություն ակնկալվում է վերջիններիս կողմից Հայաստանի հետ համագործակցության ենթատեքստում: Հայաստանի Հանրապետությունն իր սուղ հնարավորություններով առ այսօր հնարավորին չափով ֆինանսապես աջակցել է արտերկրի հայագիտական կենտրոններին: Դա իր դրսևորումն է ստացել ՀՀ սփյուռքի նախարարության և արտերկրի հայագիտական կենտրոնների կողմից համատեղ իրականացված բազմաթիվ ծրագրերում: Սակայն ակնհայտ է, որ արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսական խնդիրների լուծումը մեծապես կապված է Հայաստանի տնտեսական զարգացման և, հետևաբար, վերջինիս ֆինանսական հնարավորությունների մեծացման հետ:

Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցության՝ ներկայումս հնարավոր եղանակներն են.

Մեթոդաբանական աջակցություն: Համագործակցության սույն ձևը վերաբերում է փոխադարձ աջակցությանը կուտակված փորձի փոխանակման միջոցով: Հայաստանի հայագիտական կենտրոններն իրենց երկարամյա աշխատանքի ընթացքում կարողացել են կուտակել հսկայական փորձ թե՛ հետազոտական աշխատանքի, թե՛ ուսումնական գործունեության, թե՛ գիտաուսումնական աշխատանքի կազմակերպման և թե՛ այլ բնագավառներում: Այդ փորձը կարող է ուսանելի լինել արտերկրի հա-

յագիտական կենտրոնների համար: Իհարկէ, խոսքը չի վերաբերում Հայաստանի հայագիտական կենտրոնների փորձի մեխանիկական ընդօրինակմանը: Դա կարող է արդյունավետ չլինել՝ հաշվի առնելով հայաստանյան և արտասահմանյան հայագիտական կենտրոնների գործունեության պայմանների և այլ հանգամանքների տարբերությունը:

Ուսումնական և հեղազոտական նյութերի տրամադրում: Արտերկրի հայագիտական կենտրոնների հիմնական խնդիրներից մեկն էլ հետազոտական և ուսումնական նյութերի անբավարարությունը կամ պակասն է: Հայագիտական կենտրոնները Հայաստանում այս առումով գտնվում են համեմատաբար բարվոք պայմաններում: Նախ՝ հայ ժողովրդի պատմական հայրենիքը և ազգային պետությունը լինելու բերումով Հայաստանում է կենտրոնացված հայագիտական արժեք ներկայացնող հետազոտական նյութերի մեծ մասը: Դրանք պահվում են այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են Հայաստանի ազգային արխիվը, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանը, Պատմության և այլ թանգարանները, ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և այլն: Չենք խոսում այն մասին, որ Հայաստանի պատմամշակութային հուշարձանները, առանձին վայրերն ինքնին հետազոտության ենթակա հայագիտական նյութ են հանդիսանում: Բացի այդ, Հայաստանում է ամենաշատը ստեղծվում հայագիտական նշանակություն ունեցող գրականությունը. հետազոտական աշխատություններ, ուսումնական ձեռնարկներ և այլն: Հայաստանի հայագիտական կենտրոններն իրենց ունեցած հետազոտական նյութերը, իրենց ստեղծած և ձեռք բերած գրականությունը կարող են տրամադրել նաև արտերկրի հայագիտական կենտրոններին՝ նրանց կողմից հետազոտական նյութերի և անհրաժեշտ գրականության անբավարարության խնդիրը թեկուզ մասնակիորեն լուծելու նպատակով:

Համապետդ հեղազոտություններ: Գիտական կառույցների միջև համագործակցության սույն ձևն ամենատարածվածներից է ժամանակակից աշխարհում: Հայաստանի և արտերկրի հայագի-

տական կենտրոնները կարող են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների և խնդիրների շուրջ իրականացնել համատեղ հետազոտություններ: Ջանքերի նման համատեղումը կնպաստի հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացմանը, քանի որ տեղի կունենան որևէ կոնկրետ նպատակի (հետազոտության) շուրջ ռեսուրսների համախմբում և փոխլրացում:

Հետազոտությունների պատվիրում: Արտերկրի հայագիտական կենտրոններին համազգային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը ներգրավելու արդյունավետ միջոցներից կարող է լինել Հայաստանից (պետական մարմինների, հայագիտական կենտրոնների և այլ հաստատությունների կողմից) նրանց այնպիսի հետազոտությունների պատվիրումը, որոնք հայության համար այժմեական են, ինչպես նաև գիտական նորույթ (ակադեմիական և կիրառական) են պարունակում: Ինքնին հասկանալի է, որ այդպիսի հետազոտություններ իրականացնելու համար արտերկրի հայագիտական կենտրոնները պետք է ունենան համապատասխան ներուժ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է անհրաժեշտ քանակությամբ մասնագետների, գիտահետազոտական նյութերի և այլնի առկայությանը:

Հրատարակությունների փոխանակում: Փոխադարձ ճանաչողության խորացման, միմյանց գիտական և այլ նվաճումներին, խնդիրներին ու մարտահրավերներին հասու լինելու արդյունավետ միջոցներից է հրատարակությունների փոխանակումը հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև: Խոսքը թե՛ էլեկտրոնային, թե՛ տպագիր հրատարակությունների մասին է:

Մասնագետների փոխանակում: Համագործակցության սույն եղանակը ենթադրում է հայագիտական մի կենտրոնից մասնագետների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործուղումներ մեկ այլ կենտրոն՝ գիտահետազոտական, ինչպես նաև ուսումնական նպատակներով, և հակառակը: Այս եղանակը նույնպես կարևոր նշանակություն ունի փորձի (գիտահետազոտական աշխատանքի, մանկավարժության, ուսուցման մեթոդի-

կայի և այլ առումներով) փոխանակման միջոցով փոխհարստացման տեսանկյունից: Մասնագետների փոխանակումը կարևոր նշանակություն ունի նաև ինչպես հայագիտական կենտրոնների գործունեությանը նոր լիցք հաղորդելու, այնպես էլ առանձին մասնագետների մասնագիտական աճի տեսանկյունից: *Համապետել հրատարակությունների հիմնում:* Հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնները իրենց համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու նպատակով կարող են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմատիկայի վերաբերյալ (ինչպիսիք են, օրինակ, ցեղասպանագիտությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման, հատուցման, հետևանքների վերացման հարցը, արդի Հայկական սփյուռքը և այլն) հիմնել հրատարակություններ՝ ամսագրեր, տարեգրքեր, համացանցային կայքեր և այլն: Նշենք նաև, որ համագործակցության վերոնշյալ և այլ բնույթի եղանակները մասամբ առկա են Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների հարաբերություններում: Համագործակցության այս միջոցների կիրառումն ունի փոխշահավետ նշանակություն, քանզի նպաստում է կողմերի հարստացմանը՝ փորձով, գիտելիքներով, նոր մեթոդներով և այլն: Հետևաբար համակարգված փոխգործակցությունն անհրաժեշտություն է ոչ միայն արտերկրի, այլև հայաստանյան հայագիտական կենտրոնների համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Թաթուլ Մանասերյան

Քաղաքատնտեսական միջավայրը

Եվրասիական տնտեսական միության կայացմանն ուղղված քայլերը, ինչպես նաև վերջինիս ներսում և դրա շուրջ տեղ գտած ոչ միանշանակ գնահատվող զարգացումներն ու միտումները մեկ անգամ ևս հաստատում են միտքն առ այն, որ տնտեսական երևույթները չեն կարող գոյություն ունենալ ինքնուրույն՝ քաղաքական գործընթացներից մեկուսացված:

Եթե Ռուսաստան-Բելառուս միասնական պետության գաղափարն, ի սկզբանե, հավասարապես հիմնված էր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական լուրջ փաստարկների վրա, ապա դրան հաջորդած Մաքսային միության ստեղծման, իսկ ավելի ուշ՝ Եվրասիական տնտեսական միության ձևավորման ուղղությամբ իրականացվող միջոցառումները վկայում են քաղաքական բաղադրիչի ակնհայտ գերակայության մասին:

Հետևաբար, Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության ընձեռած հնարավորությունների ու մարտահրավերների մասին փաստարկներ ներկայացնելուց առաջ հարկ է վերլուծել ստեղծված քաղաքատնտեսական միջավայրը:

Տնտեսական ինտեգրացիայի առաջին փուլը Ազատ առևտրի գոտին է, որն այդպես էլ չստեղծվեց ԱՊՀ երկրների միջև: Ընդամենը հինգ տարի առաջ ստորագրվեց Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագիր այն դեպքում, երբ արդեն գոյություն ունեւր Մաքսային միությունը: Այսինքն՝ այստեղ նաև շփոթ կա: Սկզբում ձևավորվում է Ազատ առևտրի գոտի, այնուհետև՝ Մաքսային միություն, ապա ընդհանուր շուկա, որից հետո նոր քաղաքական և տնտեսական միություն: Համեմատության համար հարկ է նկատել, որ արդեն 20 տարուց ավելի է, ինչ գոյություն ունի Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտին՝

NAFTA-ն, որն այդպես էլ չվերածվեց մաքսային միության: Այսինքն՝ այդքան էլ հեշտ չէ ցատկել ինտեգրման մեկ աստիճանից մյուսը:

Մյուս կողմից, իրականում արհեստածին է Հայաստանին դնել ընտրության առջև՝ Եվրասիական տնտեսական միություն, թե՛ ԵՄ, քանի որ Հայաստանը և աշխարհաքաղաքական դիրքից, և տնտեսական ու քաղաքական շահերից ելնելով, պետք է փորձի հարաբերությունները զարգացնել բոլոր երկրների հետ: Ավելին, մինչ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու պատրաստակամություն հայտնելը, Հայաստանը ուներ բավականին սերտ տնտեսական կապեր բոլոր հետխորհրդային երկրների հետ, բացառությամբ՝ Ադրբեջանի, ռուսի, այստեղ կարծես թե համագործակցության համար արդեն նպաստավոր դաշտ կար:

Քանի որ Եվրասիական տնտեսական միությունն ընդամենը մի քանի ամսվա պատմություն ունի, ապա, տնտեսական շահերը հաշվի առնելով, Հայաստանն իրականում հայտնվել է այդ միությունը ձևավորողների և նախածեռնողների շարքում, հետևաբար այդ շրջանակներում ինտեգրացիային ակտիվ մասնակցությունը որպես համահիմնադիր անհամեմատ ավելի նախընտրելի են, քան հետագայում ձևավորված միության պահանջներին արձագանքելը: Մյուս կողմից, Եվրասիական տնտեսական միության շահերին, այլև, հակառակը, կարող է օգնել ավելի լավ իրացնելու երկրների մրցակցային առավելությունները, այդ թվում ԵՄ շուկաներում, և էլ ավելի ուժեղացնել դիրքերը միջազգային ասպարեզում: ԵՄ-ի և նրա առանձին անդամների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների ամրապնդումը հնարավոր ենք համարում հենց չօգտագործված հնարավորություններն իրացնելու նպատակով: Հարկ է նաև ուշադրություն դարձնել զարգացած և զարգացող երկրների քաղաքական և տնտեսական պայմանների տարբերություններին, ինչը վերջիններին հնարավորություն չի տալիս ոչ միայն իրականացնել իրենց մրցակցային առավելություններն արտաքին շուկաներում, այլև հաջող մրցակցել դրսից եկող սուբսիդավոր-

ված ապրանքների և ծառայությունների արհեստականորեն իջեցված գների հետ: Հետևաբար, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն գործոնների վրա, որոնք որոշում են հետխորհրդային երկրների դերը համաշխարհային տնտեսությունում՝ միջազգային առևտրի փոփոխվող պայմաններում, և որոնք արդիական են դարձել նոր տնտեսակարգի ձևավորման հարցում: Հարկ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանը կարող է ոչ միայն օգուտներ ակնկալել, այլև դրական օրինակ ծառայել մյուս երկրների համար, ստանձնել առաջնորդող երկրի դեր, մասնավորապես, ինստիտուցիոնալ բարեփոխումների ասպարեզում ունեցած շոշափելի ձեռքբերումներով: Ինչ վերաբերվում է առավել էական սպասելիքներին, ապա այս փուլում կարևոր է նաև այն, որ ռազմավարական դաշնակցի օգնությամբ հնարավոր լինի լուծել աբխազական երկաթգծի հարցը, որը հայ գործարարներին թույլ կտա ավելի նպաստավոր պայմաններով արտաքին աշխարհի հետ զարգացնել առևտրատնտեսական կապերը, ինչպես նաև պետք է ամեն ինչ անել, որ նաև Բելառուսի և Ղազախստանի հետ միասին Հայաստանում վերագործարկել արտադրական ձեռնարկությունները:

Հայաստանի մտահոգությունները

Կարևոր մտահոգություններից մեկը նաև այն է, որ Հայաստանը ոչ միայն ցամաքային սահման չունի Մաքսային միության անդամ մյուս երկրների հետ, այլև ծովային:

Երկրորդ կարևորագույն խնդիրն այն է, թե այս ձևաչափի դեպքում, ի վերջո, հայաստանցուն դա ինչ կարող է տալ: Անդամակցության պարագայում մեր երկրում այլևս մաքսեր չեն գանձվելու ԱՊՀ երկրներից ստացվող ապրանքներից: Բայց չմոռանանք, որ Հայաստանի պետական բյուջեի եկամուտների մի զգալի մասը հենց մաքսատուրքերից է գոյանում: Ուրեմն՝ եթե մաքսատուրքերի կեսից ավելին չենք գանձելու, ապա ինչո՞վ պետք է լրացնենք: Սա լրջագույն խնդիր է Հայաստանի համար: Մենք գիտակցաբար գնում ենք դրան, բայց մեր գործընկերներն էլ պետք է հասկանան և աջակցեն Հայաստանին:

Դրա լուծումը հակված եմ տեսնելու Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և ազգային մրցակցային առավելությունների արդյունավետ իրացման միջոցով, բայց մինչ այդ փուլին հասնելը մեր ռազմավարական գործընկերների կողմից տրամաբանական կլիներ առժամանակ, ոչ մշտապես և ոչ ուղիղ հովանավորչական քայլերով աջակցելու Հայաստանին, որ Հայաստանը կարողանա այդ մրցունակությունը ձեռք բերել և եղածը չկորցնել, որպեսզի ունենանք արժանապատիվ հարաբերություններ, իսկ հետագայում այդ ծրագրերն իրագործելի լինեն, այլապես, այն կդառնա շատ վերացական:

Այնուամենայնիվ, եթե դիտարկենք տարածաշրջանային գործընթացների տեսանկյունից, ապա Հայաստանը պարտադիր պետք է մասնակցի դրանց և չպետք է մեկուսացված լինի, ինչպես նաև՝ հորդորի, որ մյուս մասնակիցներն ավելի սթափ ու լուրջ վերաբերմունք ունենան:

Պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ ներկայումս Հայաստանը Ռուսաստանից հիմնականում ներմուծում է շուրջ 1 մլրդ դոլարի ապրանքներ և ծառայություններ, իսկ արտահանումը գրեթե 3 անգամով պակաս է, առավել ևս, որ արտահանման համար որևէ մաքսատուրք չի գանձվում: Այսինքն՝ ներմուծումից ստացված մաքսերի հաշվին է, որ բավականին պատկառելի գումարներ են հավաքագրվում պետական բյուջե: Հարց է առաջանում, թե ինչո՞վ կփոխհատուցվի այն վնասը, որը առաջանալու է այդ մաքսատուրքերի չգանձումից, որի հաշվին ֆինանսավորվում է գիտությունը, առողջապահությունը, կրթությունն ու այլ ոլորտները:

Սկզբնական փուլում չի բացառվում, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը ավելի շատ տնտեսական վնաս կբերի, քան օգուտ, եթե վերոնշյալ խնդիրը չլուծվի: Հակառակ դեպքում, վնասը շատ լուրջ կլինի: Շատ դրական է գնահատվում համագործակցությունը, բայց քաղաքական որոշումների հետ մեկտեղ, ցանկալի է, որ կարողանանք տնտեսական ճիշտ հաշվարկներ կատարել:

Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելով ինչպես Հայաստանը, այնպես էլ մյուս երկրները առևտրային քաղաքականության բնագավառում երրորդ երկրների նկատմամբ այլևս միակողմանի, ինքնակամ որոշումներ չեն կարող կայացնել: Այսինքն՝ հարցերը բոլոր երկրների հետ միասնաբար պետք է որոշվի: Օրինակ՝ ինչպիսի քաղաքականություն պետք է վարվի այն երկրների հետ, որոնք չեն մտնում Եվրասիական տնտեսական միության մեջ:

Հայաստանի համար ամենախոցելի ոլորտը մնում է գյուղատնտեսությունը: Սակայն այստեղ ավելի պարզ խնդիրներ կան, որոնք կարելի է լուծել պետության աջակցությամբ: Առաջին հերթին, այս կամ այն մշակաբույսի աճեցման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը: Խնդրի անլուծելիությունը հանգեցնում է վերարտադրության կամ պակասուրդի, որն էլ ուղեկցվում է գների աճով: Այստեղ պետք է աշխատել, և այդ աշխատանքը կապված չէ ֆինանսավորման հետ: Բացի այդ, պետք է լրջորեն աշխատել կազմակերպչական խնդիրների լուծման վրա, գյուղացիներին բացատրել առանձին գյուղատնտեսական մշակաբույսերի ներքին շուկայի պահանջները և ակնկալվող շահույթը: Պետք չէ նաև անտեսել, որ շատ պարենային ապրանքների հարցում Հայաստանն ինքնաբավ երկիր է:

Այս դեպքում նաև արտաքին շուկաներ դուրս գալով՝ գյուղացիները հենվելով այդ աջակցության, որակի, չափանիշների, պահանջների մասին մասնագիտական խորհրդակցությունների վրա, կարող են հաջողության հասնել արտադրանքի արտահանման հարցում:

Որն է ելքը

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցումը նաև ժամանակի պահանջն է և այն ճանապարհը, որը թույլ կտա համարժեք պատասխանել համաշխարհային տնտեսության արդի մարտահրավերներին: Կառույցի ներսում ուժերի ճիշտ և արդյունավետ կազմակերպման դեպքում Միությունը կարող է դառնալ հետխորհրդային տարածքում ռեգիոնալացման գործընթացի կարևոր դրսևորումը՝ որպես հակակշիռ տնտեսական և քաղաքական գլոբալացմանը: Վերջապես, զարգացման գիտականորեն հիմնավորված ծրագրերի և գործուն կառույցների ձևավորման կշռադատված որոշումների պարագայում Միությունը կարող է վերածվել համաշխարհային տնտեսության նոր ուժի կենտրոնի: Դա, իր հերթին, կարագացնի բազմաբևեռ աշխարհի կազմավորման գործընթացը՝ նրա նոր դերակատարների ակտիվ մասնակցությամբ: Ավելին, այն ավելի կհստակեցնի հետխորհրդային երկրների տեղը աշխատանքի միջազգային բաժանման մեջ՝ նպաստելով նրանց մրցակցային առավելությունների իրացմանը տարածաշրջանային ինտեգրման միջոցով: Հայաստանի պարագայում ազգային մրցակցային առավելությունների արդյունավետ իրացմանը կարող են նպաստել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում հայ համայնքները, որոնց ներուժի մոբիլիզացումը և արտերկրի «հայկական շուկայի» ձևավորումը դառնում է առաջնահերթ խնդիր:

Վերջապես, Մաքսային միության ստեղծումը կօգնի համատեղ պայքարել ներքին և արտաքին բազմաթիվ խնդիրների դեմ: Սպառողների համար ապրանքների նոր, ավելի բազմազան տեսականի առաջարկելուց բացի, Միության շրջանակներում տնտեսական համագործակցությունն ու մրցակցությունը կբերի տեղական մենաշնորհների դիրքերի թուլացման և ապրանքների ու ծառայությունների գների որոշակի անկման:

ԱՊՀ երկրների անդամությունը միջազգային կազմակերպություններին այսօր էապես փոխել է զարգացող երկրների տե-

սակարար կշիռը: Ընդհանուր առմամբ, հետխորհրդային երկրները, ավելի շատ ծայն ունենալով ԱՄՀ-ում և ՀԲ-ում, ի վիճակի են ժողովրդավարական և անկախ երկրների հետ համատեղ ավելի մեծ ազդեցություն գործել որոշումների ընդունման գործընթացի վրա՝ դրանք ուղղորդելով զարգացող երկրների շահերին: Այսպիսով, Եվրասիական տնտեսական միության անդամ հետխորհրդային երկրները ժամանակի ընթացքում կարող են համատեղ լրբբի ենթարկել իրենց շահերը՝ համագործակցությունը և կոոպերացիան ավելի շահավետ դարձնելու նպատակներով:

Հաջողության կարևոր գործոն ենք համարում նաև որոշումների ընդունման գիտական հիմնավորումն ինչպես Եվրասիական տնտեսական միության ստեղծման, այնպես էլ նրա զարգացման ծրագրերի ուղղությամբ: Դա տարածաշրջանային ինտեգրման գործընթացը կդարձնի արդյունավետ և անշրջելի: Հարկ է հիշել, որ Դավոսի ներկայիս իմիջը ստեղծել են հենց գիտնականները, որոնց հաջողվել է հմտորեն կառուցել տնտեսական ինտեգրման սկզբունքները ոչ ֆորմալ երկխոսության և ինտեգրման մասնակից կողմերի շահերը համակողմանիորեն հաշվի առնելու միջոցով:

ЭКОНОМИЧЕСКИЕ ИНТЕРЕСЫ АРМЕНИИ В ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССАХ

Аза Мигранян

Решение проблемы экономического роста и роста экономического благосостояния населения за счет расширения экономического сотрудничества с потенциальными партнерами – основной двигатель и интерес Республики Армения в интеграционных процессах.

Парадокс экономического развития Армении в последнее десятилетие заключается в том, что достаточно высокие темпы роста экономики Армении в сравнении со странами СНГ и другими странами сопровождаются сохранением высокого уровня бедности населения, низкими доходами работающей части армянского населения в республике и ростом зависимости благосостояния армянского общества от работающих мигрантов за пределами Армении и диаспоральных финансовых вливаний.

По статистическим данным Армения демонстрировала наиболее высокие темпы роста ВВП (рис. 1, годовой прирост 7,6% в 2012 г. – самый высокий показатель) среди стран Содружества (совокупный прирост ВВП по СНГ – 3,4%).




Рис.1. Показатели ВВП Армении

Снижение объемов темпов роста ВВП по итогам 2014 г. (до 3,4%) и прогнозам по 2015 г.⁶¹. являются основным пунктом подтверждения негативных эффектов от членства ЕАЭС по мнению противников евразийской интеграции. При этом темп роста промышленности Армении в 2014 г. составил 102,7% (в целом по СНГ рост промышленности составил 100,7%), производства электроэнергии 100,5 %, производства продукции сельского хозяйства 107,2 (в целом по СНГ рост сельского хозяйства составил 103,7%)⁶². С учетом того, что удельный вес промышленного сектора в экономике Армении составляет около 26-27%, торговли - 54%, замедление темпов роста торгового оборота негативно влияет на темпы экономического роста. Но при этом остается выше данных по странам СНГ.



Рис. 2. Показатели темпов роста по основным отраслям реального сектора

⁶¹ Европейский банк реконструкции и развития (ЕБРР) ухудшил прогноз по темпам роста ВВП Армении до 1,5% по итогам 2015 года. В 2016 г. прогноз роста ВВП до +1%. По прогнозам МВФ в 2015 г. Армению ждет нулевой рост, официальный прогноз правительства Армении - +4,1%.

⁶² По данным официального сайта Межгосударственного статистического комитета СНГ. ”<http://www.cisstat.com/>”

При сохранении структуры экономики, в которой преобладает не внутреннее производство, а торговля, республика обречена на внешнюю зависимость от импорта. Поэтому темп экономического роста в большей степени определяется объемом и темпом роста внутреннего потребительского спроса, зависящего от размеров доходов населения. Отсюда и приоритетность решения задачи роста благосостояния населения республики.

Однако для сохранения высоких темпов экономического роста при имеющихся пропорциях структуры экономики республики (когда доля торговли превышает 50%) необходимо, чтобы доля заработанных в экономике доходов составляли не менее 20-25% от ВВП. В этом случае возможно стимулирование экономического роста посредством наращивания внутреннего потребления. При стимулировании развития экономики по данной модели высокие темпы экономического роста будут сопровождаться кратным увеличением внешней зависимости от импорта, что в условиях транспортной блокады Армении сложно выполнимо. Кроме того, рост импорта ведет к потере финансовой устойчивости и увеличению долговой нагрузки на экономику.

В целом развитие экономики Армении имеет инерционный характер, основные параметры макроэкономического стимулирования построены на факторе роста потребления и инвестиций в экономику, причем в большей степени за счет роста доходов населения из внешних источников финансирования (в случае с Арменией доля доходов населения в большей части складывается из денежных поступлений от мигрантов и диаспоральной помощи).

В 2012 г. объем денежных переводов от внешних мигрантов в Армению составил около половины ВВП страны, переводы из России - 37 % от ВВП республики (1 220 млрд. долл.), в 2014 г. экономика Армении зависела от переводов мигрантов примерно на 21%, из них от переводов из России на 17-18%.

Российская Федерация - важнейшая страна с точки зрения доли и размера полученных переводов: 78,6% всех денежных переводов, поступающих в Армению (средняя сумма -1680 долл. США). Структура денежных поступлений от мигрантов в Армению представлена в таблице 1.

Таблица 1. Структура денежных переводов мигрантов по стране происхождения⁶³

Страна отправки	Доля в полученных денежных переводах, %	Средняя сумма перевода, долл. США
РФ	78,6	1680
США	7,7	935
Украина	1,2	685
Германия	1,2	1223
Франция	0,5	716
Греция	0,9	1292
Голландия	0,6	799
Бельгия	0,2	447
Польша	0,7	1279
Казахстан	0,5	1400

По данным Международного валютного фонда, за последние 5 лет банковские переводы составили 16% от ВВП. Из них 89% переводов осуществляются из России. На эти суммы потребляется 40% импортированных товаров. Это большая цифра, которая вдвое превышает прямые иностранные инвестиции. Кроме того, Армения входит в число 15 стран мира, экономика которых держится за счет трансфертов. Получаемые из-за рубежа суммы используются в основном на удовлетворение первоочередных нужд, а ее часть откладывается в виде сбережений. Эти деньги не используются в качестве инвестиций, например, для начала микробизнеса.

Приведенные показатели, свидетельствуют о том, что на данном этапе развития рост благосостояния населения, и в целом экономический рост Армении по действующей модели стимулирования роста потребления напрямую зависит от состояния и условия экономической деятельности мигрантов из республики. С учетом существенного перевеса армянских мигрантов в России и их финансового вклада в экономику республики, первоочередной за-

⁶³ Торосян Г., Денежные переводы и бедность в Армении. Основные результаты ОБДХ. Центр экономического развития и исследований (EDRC), Москва, Россия, 2010.

дачей Армении является расширение интеграционного сотрудничества с Россией в области регулирования свободы и комфортности российского рынка труда для мигрантов из республики.

Но в случае облегчения эмиграции и возрастания комфортности эмиграции из Армении республике грозит проблема депопуляции. По данным миграционной службы, за 2010-2011 годы из Армении выехало 106 тысяч человек. Если сохранятся аналогичные темпы миграции, то получится, что за последующие несколько лет из Армении может выехать до 150 тыс. человек, или 5% населения. Данный тренд являлся в свое время одной из причин сдерживания темпов интеграционного сближения Армении с Евросоюзом, т.к. снижение входных барьеров на европейский рынок труда для армянских трудовых приведет к существенному росту не только трудовой миграции, но и эмиграции из страны на постоянное место жительства активной части населения. Поэтому при выборе интеграционного вектора Армения руководствовалась необходимо крайне осторожно формулировать внутреннюю политику по регулированию собственного рынка труда и управлению социально-демографической ситуацией в стране.

Исходя из выше отмеченного, единственно разумным способом развития экономики Армении становится форсирование развития промышленных отраслей с наибольшим уровнем конкурентоспособности продукции и с наименьшим затратами по транспортировке этой продукции при ее экспорте. Такими отраслями традиционно в Армении были металлообработка (производство алюминиевой фольги, производство медно-молибденовых концентратов, черновой меди), добыча и обработка драгоценных камней, производство алкоголя, некоторые виды растениеводства. Перспективными также считаются отрасли, связанные с IT-технологиями, по которым республика имеет достаточно высокий конкурентный потенциал. В этой связи следующей целью, направленной на защиту национальных экономических интересов республики должен стать поиск дополнительных инвестиций, наращивание которых для Армении не представлялось возможным без интеграционного сближения.

В этой связи, решение проблемы инвестиционной привлекательности республики для потенциальных партнеров по интеграции также является не менее важным.

Армения является одной из немногих стран мира, имеющих достаточно высокий уровень инвестиционных вливаний на протяжении всего суверенного существования. На начало 2011 г. объем внешних капиталовложений в экономику республики составил до 3,146 млрд. долл. США, что составляет 94,5% от уровня ВВП. Положительной стороной высокого уровня закредитованности является ресурс инвестиционной привлекательности Армении, который основан на достижениях армянской экономики в международных рейтингах, что дает надежду на продолжение использования внешних источников поддержки экономики.

По данным «Индекса экономической свободы 2013» (за 2012 год), Армения заняла 38 место среди 177 государств в рейтинге экономической свободы. Тогда Армения опередила все страны СНГ по уровню экономической свободы, а среди 43-х стран Европейского региона расположилась на 17-ом месте⁶⁴. По тому же рейтингу среди стран региона лидирует Грузия - 21 место, после Армении идут Турция - 69 место, Азербайджан - 88 место, Россия - 139 место и Иран - 168-ое место⁶⁵.

Кроме того, эксперты фонда Heritage Foundation оценили «свободу предпринимательства» в Армении в 87,6 балла по 100 балльной шкале; «свободу торговли» - 85,4 балла, «фискальную свободу» - 88 баллов, «государственные расходы» - 82,1 балла, «монетарную свободу» - 73 балла, «инвестиционную свободу» - 75 баллов, «финансовую свободу» - 70 баллов, «права собственности» - 30 баллов, «свободу от коррупции» - 26 баллов и «свободу труда» - 77,1 балла. Согласно докладу, уровень свободы армянской экономики оценивается в 69,4 балла, что на 0,6 пункта выше, чем в 2011 году.

⁶⁴ Публикуемый ежегодно рейтинг Heritage Foundation оценивает экономическую свободу в различных странах мира по десяти показателям, включая свободу ведения бизнеса, торговли, ситуацию с фискальной и денежно-кредитной политикой, свободу инвестиций, трудового рынка, а также уровень коррупции

⁶⁵ Страны, набравшие в рейтинге менее 50 баллов, считаются «абсолютно несвободными», 50-60 баллов – «преимущественно несвободными», 60-70 баллов – «относительно свободными», 70-80 баллов – «в основном свободными», а свыше 80-ти баллов – «свободными».

Как заявили специалисты фонда, рост в основном отражает повышение эффективности управления государственными расходами. Однако было отмечено, что, хотя страна и показывает хорошие результаты по многим показателям экономической свободы, основы свободной экономики не стимулируются в таких областях, как независимость судебной системы и прозрачность деятельности правительства. При этом авторы исследования было подчеркнуто, что, несмотря на борьбу с коррупцией, в частности, в налоговой сфере, тем не менее коррупция и сращивание бизнеса и власти приводят к злоупотреблению влиянием властных кругов на бизнес в стране.

Тогда же по рейтингу Doing Business Всемирного банка, Армении улучшила свои позиции на 18 пунктов, заняв 32 место. Прогресс Армении, согласно экспертам ВБ, был обусловлен защитой инвестиций, интересов малого бизнеса и другими серьезными реформами в различных сферах. Согласно этому докладу, у Армении лучшая позиция среди стран СНГ и она уступает в регионе лишь соседней Грузии.

Ускоренное продвижение республики в рейтинговых позициях международных структур формально позволяет констатировать улучшение инвестиционного климата в Армении, однако не проблем повышения экономической отдачи инвестиций и сокращения их срока окупаемости, что и является основным стимулом для любого инвестора.

Ситуация в финансовом секторе Армении намного сложнее, чем это видится с позиции международных финансовых структур. Проблема в том, что рост внешних кредитов увеличивает нагрузку на бюджет страны. Указанные же рейтинги мало способствуют росту прямых инвестиций, так как они в первую очередь зависят от экономической ситуации в республике. Кроме того, структура внешнего долга (внешних кредитов, рис. 2) по странам кредиторам характеризуется ростом концентрации российских кредитов почти в 2 раза (с 37% в 2007г. до 63% в 2011г.) и снижением доли российских инвестиций в 2013-2014 гг. до уровня (\$35,6 млн или сократились втрое по сравнению с 2011 г., при этом общий объем прямых инвестиций снизился вдвое, что объясняется снижением общего уровня инвестиций, рис. 3, 4).




Рис. 3. Структура внешнего долга Армении по странам кредиторам⁶⁶

Общая сумма накопленных инвестиций России в Армении с 1993г. до 2012 г. оценивается в 4,727 млрд. долл. США. В этом смысле Россия сегодня делит с Арменией риски по поводу ее экономического развития.




Рис. 4. Внешние источники финансовых потоков в Армению⁶⁷

⁶⁶ Составлено автором на основе данных Национальной статистической службы РА/. «<http://www.armstat.am/ru/?nid=45&year=2012>»

⁶⁷ Составлено автором на основе данных ЮНКТАД. «http://unctadstat.unctad.org/wds/ReportFolders/reportFolders.aspx?sRF_ActivePath=p,15912&sRF_Expanded=p,15912»

Диапоральные инвестиции в строительство на исторической родине, были обусловлены спецификой дифференцированной армянского населения по различным регионам мира и стремлением поддерживать собственное чувство причастности к исторической родине. Этот феномен способствовал превращению недвижимости в товар внутреннего экспорта. Интерес армянской диаспоры к недвижимости на исторической родине стал проявляться с 2002 г. и постоянно увеличивался. Это вызывало приток в страну крупных объемов иностранной валюты. Кроме того, большие объемы валюты поступали в страну в связи с растущим диаспоральным туризмом. В 2010 г. страну посетило 558 тыс. туристов. Ограниченность роста данной специфической сферы деятельности - строительство в целях конечного личного потребления - собственно и стали естественным ограничителем американских инвестиций в Армению.

Сокращение инвестиционной активности ближневосточных стран (Иран, Ливан, Сирия) в большей степени связаны с ухудшением геополитической ситуации в ближневосточном регионе. Крупным источником притока валюты стала зарубежная трудовая деятельность армянских рабочих. В связи с этим следует отметить важную особенность развития экономики Армении, которая выражается в росте доли средств населения в финансировании инвестиций в основной капитал с 18% в 2005 г. до 70% в 2010 г. Стратегия экстенсификации экономики за счет внешних инвестиций создало угрозу экономической, и особенно финансовой безопасности республики. Рост внешнего долга, в основе своей аккумулированного в рамках долгового бремени государственного бюджета определил крайнюю заинтересованность Армении в увеличении прямых инвестиций с целью снижения финансовой зависимости республики от кредиторов. Рост прямых инвестиций в принципе возможен при соблюдении двух основных условий: роста инвестиционной привлекательности экономики республики (не формальное увеличение рейтингов, а рост капиталоотдачи и окупаемости) и преодоление транспортной и экономической блокады республики.

На этом фоне вполне понятна прагматичная позиция России и Армении в вопросах расширения интеграционного сотрудничества Армении с ЕС и другими странами, так как в условиях транспортной изоляции именно российский капитал в наибольшей степени заинтересован в расширении экспортных возможностей армянской экономики. Поэтому Россия не только не блокировала интеграционные устремления Еревана в сторону ЕС, но и лоббировала его интересы в части преодоления экономической изоляции. Тем не менее, на России сегодня во многом лежит задача транспортного обеспечения внешнеторговых связей Армении. Россия финансирует основные инфраструктурные проекты, формирующие условия для создания и развития факторов производства в республике (электроэнергетика, железные дороги, транспортные коммуникации, алюминиевая промышленность, мобильная связь и т.п.). Последний крупный проект российско-армянского сотрудничества, связан с утверждением в 2009 г. учредительского договора и уставного капитала армяно-российского ЗАО «Мецаморэнергаторм»⁶⁸, которое должен был заняться организацией строительства нового энергоблока на Армянской АЭС, стоимость которого должна была составить до 4 млрд. долл. США. Российское инвестиционное присутствие связано с долгосрочными проек-

⁶⁸ ЗАО «Мецаморэнергаторм» было создано 3 февраля 2010 года для строительства в Армении нового атомного энергоблока. Акционерами на паритетных началах (50/50%) являются с российской стороны «Атомстройэкспорт» (структура «Росатома», а с армянской - Минэнерго и природных ресурсов РА. На новом атомном энергоблоке в Армении мощностью 1060 МВт планировалось установить реактор российского производства с европейским сертификатом безопасности. Ранее «Росатом» объявил о 20-25% участии в проекте строительства нового атомного блока в Армении. На начальном этапе строительство планировалось в 2012-2013 годах, а завершение к 2017 году. В феврале 2012 года уже сообщалось, что энергоблок планируется построить к 2019-2020 годм. В настоящее время на Армянской АЭС действует один энергоблок мощность 400 МВт. Его проектный ресурс заканчивается в 2016 году, однако, как ранее сообщала армянская сторона, блок будет законсервирован только после строительства нового. Эксперты МАГАТЭ также заявляли, что ресурс действующего блока может быть продлен.

тами, имеющими стратегический характер. Отсюда высокая степень не только финансовой зависимости Армении от России, сколько рост экономической зависимости в целом, так как российский капитал оказывает непосредственное влияние на макроэкономическое равновесие⁶⁹.

Таким образом, при любой конфигурации интеграционных проектов, Армения была крайне заинтересована в сохранении лояльности Москве, а теснота экономической зависимости армянской экономики от России за прошедшие годы стала столь высока, что у Армении просто не было иного выхода кроме интеграционного сближения с ней.

⁶⁹ О чем свидетельствовал экономический спад в республике в 2009 г. и спад 2014-2015 г., обусловленный кризисом в российской экономике

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Զեկույցների ժողովածու

Պատվեր 119

Տպաքանակ 150

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն,
Երևան, Նոր Նորքի I զանգված,
Սամվել Սաֆարյան 11/1^Ա

